

ՖԻՆԱՆՍԱԲԱՆԿԱՅԻՆ ԶՈՒԵՉ

Տիգրան Ալոյան

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆԷՔ

ԵՐԵՎԱՆ 2003

Ֆինանսաբանկային քուլեջի հիմնադիրներ

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՀՀ կենտրոնական բանկ
Հայաստանի բանկերի միություն

Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան 2, Ամիրյան 26

Հեռ. (3 741) 537788

Հեռ./ֆաքս (3 741) 537767

Web-site: <http://www.fbc-edu.am>

E-mail: staff@fbc-edu.am

Ձեռնարկի տպագրությունն իրականացվել է «Բանկ և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների ուսուցանում և թրեյնինգ» ծրագրի շրջանակներում, «Շորբանկ» խորհրդատվական ծառայություններ կորպորացիայի դրամաշնորհի միջոցներով՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ:

The publication of the manual is done within the “Bank and Non Bank Financial Institutions Mentoring and Training” program supported by Shorebank Advisory Services Inc. grant funded by United States Agency for International Development (USAID)

Հրատարակչի գրանցման համարանիշ

© Ֆինանսաբանկային քուլեջ, 2003

Հարգարժան ընթերցող

Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի մրցունակությունը բարձրացնելու, դրանք ժամանակակից գիտելիքներով զինված մասնագետներով համալրելու նպատակով ստեղծվեց Ֆինանսաբանկային քոլեջը:

Առաջնորդվելով ուսումնական գործընթացի կազմակերպման միջազգային փորձով՝ Ֆինանսաբանկային քոլեջը կիրառում է ուսուցման ժամանակակից մեթոդներ, այդ թվում՝ քոլեջի դասախոսների կողմից ստեղծված ուսումնական նյութեր, որոնք ստացել են Հայաստանի Հանրապետության ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների հավանությունը և արժանի են համարվել որպես դասագիրք տպագրվելու: Դասագրքերի առավելություններից մեկն այն է, որ դրանց հեղինակները հանրապետության բանկային ոլորտի լավագույն մասնագետներ են:

Ողջունում ենք Ֆինանսաբանկային քոլեջի ուսումնական նյութերի տպագրությունը և հուսով ենք, որ դրանք լայն օգտագործման նյութ կդառնան ոչ միայն քոլեջի ուսանողների, Հայաստանի Հանրապետությունում բանկային գործի մասնագետներ պատրաստող մյուս ուսումնական հաստատությունների, այլև ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների համար:

Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկի խորհուրդ

Ֆինանսաբանկային քոլեջի դասախոսների կողմից ստեղծված ուսումնական նյութերը համահունչ են ժամանակի պահանջներին և լիովին համապատասխանում են բանկային մասնագետների պատրաստման միջազգային չափանիշներին: Դրանք արդիական են և ներառում են իրավիճակային օրինակներ ֆինանսաբանկային ոլորտի առօրյայից, որոնց ուսումնասիրությունն էլ ավելի է նպաստում մատուցվող նյութի ընկալմանը:

Ֆինանսաբանկային քոլեջի դասախոսությունների տպագրությունն առաջընթաց քայլ է հանրապետության կրթական ոլորտի բարեփոխումների գործընթացում:

Կարծում ենք, դրանք սեղանի գիրք կդառնան և՛ բանկային գործն ուսումնասիրողների և՛ ընթերցողների ավելի լայն շրջանակի համար:

Հայաստանի բանկերի միություն

Բարի երթ

Առաջաբան

Գրախոսվող «Ֆինանսական իրավունք» ուսումնական ձեռնարկը համառոտ և ամփոփ ընթերցողին է ներկայացնում ֆինանսների հասկացությունը իրավունքի տեսանկյունից, Հայաստանի ֆինանսական համակարգը, պետության ֆինանսական գործունեության հիմնական ուղղությունները, ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինների գործունեության իրավական ասպեկտները:

Բացի այդ, ձեռնարկը պատկերացում է տալիս ֆինանսական նորմերի հասկացության և տեսակների, ֆինանսական իրավահարաբերությունների և դրանց տարրերի մասին: Ուսումնասիրվում են ֆինանսական իրավունքի սուբյեկտների իրավական պաշտպանության և դրանց խախտման համար կիրառվող պատժամիջոցներին առնչվող խնդիրները:

Ներկայացվում են ֆինանսական վերահսկողության հասկացությունը և դրա նշանակությունը: Ուսումնական նյութը վերլուծում է նաև ՀՀ բյուջետային համակարգը, ՀՀ պետական և տեղական բյուջեների դերը և նշանակությունը:

Ձեռնարկը դիտարկում է նաև ֆինանսաիրավական հարաբերությունները կարգավորող մի շարք իրավական ակտեր:

Ուսումնական ձեռնարկը ներկայացված է ընթերցելի լեզվով և մատուցված է սեղմ, բովանդակալից ձևով: Հեղինակի ոճը արտացոլում է առարկայի տիրապետման խորը մակարդակը:

Գրախոսվող նյութի յուրաքանչյուր գլխում տրվում են թեմայի նպատակը, ձեռնարկն ուսումնասիրելուց հետո ընթերցողների կողմից ձեռք բերվելիք ունակությունները և հմտությունները, ինքնաստուգման հարցերը: Ուսումնական նյութում տրված են հանգուցային բառերի ցուցիչը և առաջարկվող գրականության ցանկը, ինչը ոլորին է դարձնում ձեռնարկի օգտագործումը:

«Ֆինանսական իրավունք» ուսումնական ձեռնարկը նախատեսված է բուհերի և միջին մասնագիտական հաստատությունների ուսանողների և ասպիրանտների, ինչպես նաև ֆինանսաբանկային համակարգի աշխատակիցների համար:

Գ. Գևորգյան
Տնտեսագիտության թեկնածու,
USAID-ի կողմից ֆինանսավորվող
«Բանկ և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների
ուսուցման և քրեյնինգի» ծրագրի խորհրդատու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԹ. ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....6
Ինքնաստուգման հարցեր..... 7

ԳԼՈՒԽ 2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....8
Ինքնաստուգման հարցեր..... 9

ԳԼՈՒԽ 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ.....10
Ինքնաստուգման հարցեր..... 12

ԳԼՈՒԽ 4. ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ.....13
Ինքնաստուգման հարցեր..... 15

ԳԼՈՒԽ 5. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԸ, ՊԱՐՏԱԳԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ.....16
Ինքնաստուգման հարցեր..... 18

ԳԼՈՒԽ 6. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ.....19
Ինքնաստուգման հարցեր..... 20

ԳԼՈՒԽ 7. ԱՈՒՆՁԻՆ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐ.....21
Ինքնաստուգման հարցեր..... 22

ԳԼՈՒԽ 8. ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ.....23
 Պետական տուրքեր և վճարներ..... 23
Ինքնաստուգման հարցեր..... 24

ԳԼՈՒԽ 9. ԱՅԼ ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ.....25
 Տեղական տուրքեր և վճարներ, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ, բնապահպանական և բնօգտագործման վճարներ, ճանապարհային վճարներ 25
Ինքնաստուգման հարցեր..... 26

ԳԼՈՒԽ 10. ՊԵՏԱԿԱՆ ԾԱՆՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....27
Ինքնաստուգման հարցեր..... 28

ԳԼՈՒԽ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....29
Ինքնաստուգման հարցեր..... 30

ԳԼՈՒԽ 12. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՆՈՒՄՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....31
Ինքնաստուգման հարցեր..... 32

ԳԼՈՒԽ 13. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....33
Ինքնաստուգման հարցեր..... 34

ԳԼՈՒԽ 14. ԳՐԱՄԱՐՁԱՆԱՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....35
Ինքնաստուգման հարցեր..... 36

ԳԼՈՒԽ 15. ԱՐԺՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....37
Ինքնաստուգման հարցեր..... 38

ԳԼՈՒԽ 16. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....39
Ինքնաստուգման հարցեր..... 40

ԳԼՈՒԽ 17. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....41
Ինքնաստուգման հարցեր..... 42

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....43
ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ԲԱՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ.....43

ՉԼՈՒԽ 1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷՔ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍԱԿԱՐԳԸ

Թեմայի նպատակը՝ ներկայացնել և քննարկել ֆինանսների հասկացությունը և ՀՀ ֆինանսական համակարգը, պետության ֆինանսական գործունեության դրսևորման հիմնական ուղղությունները, ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինները:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողը պատկերացում կկազմի ՀՀ ֆինանսական իրավունքի և համակարգի, ֆինանսական իրավունքի հիմնական մեթոդի և ֆինանսական իրավունքի աղբյուրների մասին:

Ֆինանսներ հասկացությունը և ՀՀ ֆինանսական համակարգը

Ֆինանսները՝ որպես հասարակական կյանքի երևույթ, առաջացել են պետության և փողի առաջացման պահից: Ֆինանսները հասարակության մեջ առկա ոչ բոլոր փողային հարաբերություններն են, այլ դրանց մի մասը, նրանք, որ կապված են պետության (կամ այլ անձանց) խնդիրների և գործառույթների իրականացման և ընդլայնված վերարտադրության պայմանների ապահովման նպատակով դրամական միջոցների կենտրոնացված և ապակենտրոնացված հիմնադրամների ձևավորման, բաշխման և օգտագործման հետ:

Ֆինանսները ներառում են երկու խումբ հարաբերություններ.

1. հարաբերություններ, որոնք կապված են դրամական միջոցների կենտրոնացված հիմնադրամների ձևավորման և օգտագործման հետ
2. հարաբերություններ, որոնք միջնորդավորում են կազմակերպությունների դրամական միջոցների ապակենտրոնացված հիմնադրամների ձևավորումը և օգտագործումը:

Արևմուտքում ֆինանսները բաժանվում են հանրայինի և մասնավորի: Եթե կենտրոնացված (հանրային) ֆինանսներն ընդգրկման տեսանկյունից համարժեք են, ապա ապակենտրոնացվածը (մասնավոր) տարբեր են: Առաջինները (հանրայինը) ներառում են հասարակության կարիքների բավարարմանն ուղղված ֆինանսները: Ապակենտրոնացված ֆինանսներն ընդգրկում են կազմակերպությունների ֆինանսական միջոցները, իսկ մասնավորն ավելի լայն ընդգրկում ունի՝ քաղաքացիների և կազմակերպությունների ֆինանսական միջոցները:

ՀՀ ֆինանսական համակարգը

Լայն իմաստով, ՀՀ ֆինանսական համակարգը հանրային և մասնավոր ֆինանսների ամբողջությունն է: Իսկ նեղ իմաստով՝ զուտ հանրային ֆինանսները, որոնք ծառայում են հասարակական բազմատեսակ կարիքների բավարարմանը և կազմված են մի քանի օղակներից.

1. բյուջետային հիմնադրամներ (ՀՀ և համայնքների բյուջեներ)
2. [պետական վարկ](#)
3. ապահովագրական հիմնադրամներ
4. կազմակերպությունների ֆինանսներ:

Պետության ֆինանսական գործունեությունը դրսևորվում է հետևյալ երեք հիմնական ուղղություններով.

1. ֆինանսական միջոցների կուտակում
2. ֆինանսական միջոցների բաշխում
3. ֆինանսական միջոցների օգտագործում:

Ֆինանսական գործունեության հիմնական նպատակն է կենսագործել երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և պաշտպանունակության խնդիրները: Ըստ էության, պետության ֆինանսական քաղաքականությունը կառավարման հիմնական միջոցներից է:

Պետական ֆինանսական գործունեության մեթոդները.

1. Պետական դրամական միջոցների կուտակման համար օգտագործվում են.
 - ա. պարտադիր (օրինակ, հարկերը) և
 - բ. կամավոր (օրինակ, վիճակախաղեր) մեթոդները:
2. Պետական դրամական միջոցների բաշխման ժամանակ օգտագործվում են.
 - ա. ֆինանսավորման (անհատույց) և
 - բ. վարկավորման մեթոդները:
3. Պետական դրամական միջոցների օգտագործման ժամանակ կիրառվում են.
 - ա. ծախսերի կատարման նախահաշվային
 - բ. հաշվապահական հաշվառման
 - գ. հաշվեկշռային մեթոդները:

Ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինները.

Ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինները բաժանվում են երկու խմբի.

1. Այն մարմինները, որոնք իրենց հիմնական գործունեությանը զուգահեռ իրականացնում են ֆինանսական գործունեություն. ՀՀ ԱԺ (ընդունում է ՀՀ պետբյուջեն), ՀՀ Նախագահ, ՀՀ կառավարություն, նախարարություններ, Երևանի քաղաքապետարան, մարզպետներ:
2. Այն մարմինները, որոնց համար ֆինանսական գործունեությունը հանդիսանում է հիմնական. ՀՀ ֆինանսների նախարարությունը և իր կազմում գտնվող կենտրոնական զանձապետարանը, հարկային և մաքսային մարմինները, ՀՀ կենտրոնական բանկը:

77 Ֆինանսական իրավունքը հասկացությունը և համակարգը

ՀՀ Ֆինանսական իրավունքը ՀՀ իրավունքի ճյուղ է, որը կարգավորում է պետության ֆինանսական գործունեության ընթացքում առաջացող հասարակական իրավահարաբերություններն՝ ըստ հետևյալ գործառույթների.

1. դրամական միջոցների կուտակման
2. պետության ֆինանսական միջոցների բաշխման
3. այդ միջոցների օգտագործման
4. այդ միջոցների շարժի վերահսկման
5. դրամամիջոցների էմիսիայի:

Ֆինանսական իրավունքի հիմնական մեթոդը՝ իշխանական կարգադրերի կամ վարչահրամայական մեթոդն է: Այսինքն, մի կողմը (իշխանական մարմինը) կայացնում է որոշում, առանց մյուս կողմի կամքի արտահայտման, որը պարտադիր է վերջինիս կատարման համար:

Ֆինանսական իրավունքի աղբյուրներն են.

- ՀՀ սահմանադրությունը
- ՀՀ օրենքները. (օրինակ, 1997թ. Հարկերի մասին և այլն)
- ՀՀ նախագահի հրամանագրերը
- ՀՀ կառավարության որոշումները. օրինակ, 1998թ. Օդային տուրքի գանձման կարգի մասին այլ մարմինների ակտերը՝ օրենքով սահմանված դեպքերում և սահմաններում:

Ինքնաստուգման հարցեր

1. ՀՀ [Ֆինանսական համակարգ](#) հասկացությունը:
6. Պետական ֆինանսական գործունեության ուղղությունները:
7. Ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինները:
8. Ֆինանսական իրավունքը հասկացությունը և համակարգը:

ԳԼՈՒԽ 2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ ԵՎ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեմայի նպատակը՝ ներկայացնել և քննարկել ֆինանսական նորմերի հասկացությունը և տեսակները, ֆինանսական իրավահարաբերությունները և դրանց տարրերը: Կքննարկվեն ֆինանսական իրավունքի սուբյեկտների իրավական պաշտպանության և դրանց խախտման համար կիրառվող պատժամիջոցները:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողները կկարողանան.

- ներկայացնել ֆինանսական նորմերը և դրանց տեսակները
- բնութագրել ֆինանսական իրավահարաբերությունները և դրանց տարրերը
- ներկայացնել ֆինանսական իրավունքի սուբյեկտների իրավական պաշտպանությունը և դրանց խախտման համար կիրառվող պատժամիջոցները:

Ֆինանսական նորմեր

Ֆինանսական իրավական նորմերը պետության կողմից սահմանված պարտադիր կանոններն են, որոնց միջոցով կարգավորվում են հասարակական հարաբերությունները՝ կապված դրամական հիմնադրամների կազմավորման, բաշխման և օգտագործման հետ:

Ֆինանսաիրավական նորմերն, ունենալով նույն կառուցվածքը, ինչ այլ նորմերը, (հիպոթեզ, դիսպոզիցիա և սանկցիա) առանձնահատուկ են: Ֆինանսական նորմերի առանձնահատկությունները, ի տարբերություն այլ նորմերի, պայմանավորված են ֆինանսաիրավական կարգավորման առարկայի և մեթոդի առանձնահատկություններով:

Ֆինանսաիրավական նորմերի առանձնահատկությունների շարքում կարելի է նշել.

- ա. անմիջական նպատակային նշանակությունը
- բ. հանրային շահերի իրականացման միջոց լինելը
- գ. անկայունության տարրի առկայությունը (օրինակ, տնտեսաֆինանսական կանխատեսումները, որոնք սահմանվել են ֆինանսական նորմերով, կարող են տեղի չունենալ)
- դ. վարչահրամայական բնույթը (պետության կամքի համաձայն):

Ֆինանսաիրավական նորմերի տեսակներն են.

- Ըստ գործառույթների.
 - կարգավորող (հիմնականում մեծ մասը)
 - պահպանող (խախտումների դեպքում պատասխանատվության):
- Ըստ իրավաբանական բովանդակության.
 - պարտավորեցնող (մեծ մասը, օրինակ, որոշակի դրական գործողություն կատարել)
 - արգելիչ (ձեռնպահ մնալ որոշակի գործողություններից, օրինակ, առանց լիցենզիայի)
 - լիազորող (սուբյեկտը կարող է իր հայեցողությամբ գործել որոշակի շրջանակներում):

Ըստ բովանդակության.

- նյութական
- ընթացակարգային (պրոցեսուալ):

Ֆինանսական իրավահարաբերություններ

Ֆինանսական իրավահարաբերությունները առանձնահատկությունները պայմանավորված են կարգավորման առարկայի և մեթոդի յուրահատկությամբ: Այն կայանում է նրանում որ.

1. ֆինանսական իրավահարաբերությունները ծագում և զարգանում են բացառապես պետության ֆինանսական գործունեության ոլորտում
2. ֆինանսական իրավունքը հանրային շահերի իրացման ձևն է
3. ֆինանսական իրավահարաբերությունները իրենց էությանը տնտեսական բնույթի են:

Ֆինանսաիրավական հարաբերությունների տարրերն են.

- ա. սուբյեկտը
- բ. օբյեկտը

գ. բովանդակությունը

Սուբյեկտ՝ ֆինանսաիրավահարաբերությունների մասնակիցները՝ իրավասուբյեկտությամբ օժտված իրավունքների և պարտավորությունների կրողներն են,

Ֆինանսաիրավական սուբյեկտները շատ բազմազան են և բաժանվում են 3 խմբի.

1. հանրային սուբյեկտներ (տարածքային կազմավորումներ)՝ ՀՀ, Երևանը, մարզերը, համայնքները
2. կոլեկտիվ սուբյեկտներ՝ պետական իշխանության մարմինները և կազմակերպությունները
3. անհատական սուբյեկտներ՝ ֆիզիկական և պաշտոնատար անձինք:

Օբյեկտն՝ այն է, որին ուղղված է ֆինանսական իրավահարաբերության մասնակիցների վարքագիծը և ըստ նյութական բովանդակության բաժանվում է 2 խմբի.

1. բաժանվողի՝ հարկեր, տուրքեր, բյուջետային հատկացումներ, բյուջետային վարկեր, բյուջետային փոխառություններ, լրավճարներ, սուբվենցիաներ, և այլն
2. չբաժանվողի՝ օրինակ, պետական ֆինանսական վերահսկողությունը:

Բովանդակությունը՝ ֆինանսական իրավահարաբերության մասնակիցների իրավունքները և պարտականություններն են:

Ֆինանսական իրավահարաբերությունների ծագման, փոփոխման և դադարեցման հիմք են հանդիսանում իրավաբանական փաստերը:

Ֆինանսաիրավական սուբյեկտների իրավական պաշտպանությունը

Ֆինանսաիրավական պաշտպանությունը կիրառվում է ֆինանսաիրավական նորմերի պահանջները խախտելու դեպքում, ինչպես նաև ֆինանսաիրավական հարաբերության սուբյեկտների իրավունքների պաշտպանության համար:

Ֆինանսական իրավախախտումը ֆինանսական իրավունքի նորմերը խախտող հակաօրինական, մեղավոր արարք է, որի համար օրենսդրությամբ սահմանվում է ֆինանսաիրավական պատասխանատվություն:

Ֆինանսական իրավախախտումների համար իրավախախտի նկատմամբ կիրառվում են տուժամիջոցներ (սանկցիաներ):

Այդ տուժամիջոցները առանձնահատուկ են նրանով որ.

ա. բացառապես դրամական բնույթ են կրում՝ տույժեր և տուգանքներ

բ. մուտքագրվում են բյուջե կամ համապատասխան արտաբյուջետային հիմնադրամ

գ. ունեն վերականգնիչ և տուգանային բնույթ:

Տուժամիջոցների տեսակները.

Տուժամիջոցները լինում են հետևյալ երկու տեսակի.

ա. տույժ և

բ. տուգանք.

Տույժը՝ իրավավերականգնիչ տուժամիջոց է՝ ուղղված պետությանը պատճառված վնասի վերացմանը:

Տուգանքը՝ տուգանային տուժամիջոց է և սահմանվում է իրավախախտների պատժելու նպատակով:

Ինքնաստուգման հարցեր

1. Ֆինանսական նորմերը և դրանց տեսակները:
2. Ֆինանսական իրավահարաբերությունների առանձնահատկությունները:
3. Ֆինանսաիրավական հարաբերությունների տարրերը:
4. Ֆինանսական իրավախախտումները և պատասխանատվությունը:
5. Ֆինանսական տուժամիջոցների տեսակները.

ՎՈՒԽ 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Թեմայի նպատակը՝ ներկայացնել ֆինանսական վերահսկողության հասկացությունը և նշանակությունը: Կքննարկվեն ֆինանսական վերահսկողության բովանդակությունը, ձևերն ու մեթոդները, ֆինանսական վերահսկողության տեսակները և իրականացնող մարմինները: Կներկայացվի նաև ֆինանսական վերահսկողության հետ առնչվող հաշվապահական հաշվառման իրականացման կարգավորումը:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողները կկարողանան

- պարզաբանել ֆինանսական վերահսկողության էությունը և նշանակությունը, ինչպես նաև ձևերն ու մեթոդները
- ներկայացնել ֆինանսական վերահսկողության տեսակները և իրականացնող մարմինները:

Հասկացությունը և նշանակությունը

Ֆինանսական վերահսկողությունը կազմում է ֆինանսական միջոցների կառավարման անբաժանելի և կարևոր մասը: Նպատակն է՝ բացահայտել ընդունված չափանիշներից շեղումները և օրինականության խախտումները, ինչպես նաև առավել կարևոր փուլերում վերահսկել ֆինանսական գործունեության արդյունավետությունը և նյութական ռեսուրսների տնտեսման ուղիները: Ֆինանսական վերահսկողության արդյունքում հնարավոր է լինում ձեռնարկել ուղղորդող միջոցներ, անհրաժեշտության դեպքում մեղավորներին ենթարկել պատասխանատվության, փոխհատուցում ստանալ պատճառված վնասի համար, միջոցառումներ ձեռնարկել կանխելու կամ կրճատելու նման խախտումներն ապագայում:

Ֆինանսական վերահսկողությունը ներառում է ֆինանսական գործունեության դիտարկումներ օրինականության և նպատակահարմարության տեսանկյունից: Միաժամանակ, ի տարբերություն հսկողության, բացառում է միջամտությունը սուբյեկտի օպերատիվ գործունեությանը:

Ֆինանսական վերահսկողությունը իրականացվում է իրավական նորմերով սահմանված կարգով, պետական մարմինների միջոցով:

Ֆինանսական վերահսկողության օբյեկտ են հանդիսանում նախ և առաջ դրամական հարաբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական ռեսուրսների կազմավորման և օգտագործման ժամանակ: Ֆինանսական վերահսկողությունն ընդգրկում է նաև տնտեսական հարաբերությունների համալիր ստուգումը, քանի որ ֆինանսական գործողություններից շատերում իրենց արտացոլում են գտնում տնտեսական գործունեության առանձին տարրեր:

Ֆինանսական վերահսկողության բովանդակությունն է.

- ա. կազմակերպությունների, քաղաքացիների՝ պետության և տեղական ինքնակառավարման մարմինների հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունների ստուգումը
- բ. պետական և համայնքային հիմնարկների և կազմակերպությունների՝ իրենց տնօրինման տակ գտնվող դրամական ռեսուրսների օգտագործման ճշտության ստուգումը
- գ. կազմակերպությունների, հիմնարկների կողմից ֆինանսական գործառնությունների, հաշվարկների, դրամական միջոցների պահպանության կանոնների պահպանման ստուգումը
- դ. նյութական և դրամական միջոցների առավել խնայողաբար օգտագործումը
- ե. ֆինանսական կարգապահության ամրապնդումը, խախտումների նախագոյնացումը և վերացումը:

Ֆինանսական վերահսկողության ձևերն ու մեթոդները

Ձևերը.

- ա. իրավական՝ իրավական կանոնակարգում
- բ. կազմակերպչական՝ կազմակերպչական գործողությունների իրականացում:

Մեթոդները.

ըստ անցկացման ժամանակի՝

- ա. նախնական,
- բ. ընթացիկ և
- գ. հաջորդող

ըստ բովանդակության՝

- ա. դիտարկումը,
- բ. ստուգումը,
- գ. ուսումնասիրությունը,
- դ. վերլուծությունը և
- ե. վերստուգումը.

դիտարկումը ենթադրում է ընդհանուր ծանոթացում վերահսկման օբյեկտի ֆինանսական գործունեության վիճակի հետ.

ստուգումը՝ ֆինանսական գործունեության առավել խորը և լրիվ հետազոտումն է դրա օրինականության, ճշտության, նպատակահարմարության պարզման նպատակով: Ստուգումներն իրականացվում են 2001թ. ապրիլի 3-ի «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման ու անցկացման մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Ստուգումներն իրենց հերթին լինում են հետևյալ տեսակների.

ա. ըստ իրականացման վայրի՝ ներքին (ստուգվող օբյեկտ այցելությամբ), արտաքին (փաստաթղթերի ընդգրկումով)

- բ. ըստ պարբերականության՝ սկզբնական և լրացուցիչ
- գ. ըստ իրականացման՝ համատարած (բոլոր փաստաթղթերի ներգրավմամբ) և ընտրանքային

դ. ըստ ընդգրկման աստիճանի՝ ֆինանսատնտեսական գործունեության համալիր և մասնակի:
ուսումնասիրությունը ներկայացված նյութերի հիման վրա (հաշվապահական, ֆինանսական և այլ) պարզաբանելու նպատակով ներքին ընթացակարգ է: Իրականացվում է ֆինանսական գործունեության առանձին կողմերի նկատմամբ և հենվում է ցուցանիշների ավելի լայն շրջանակի վրա, որով և տարբերվում է ստուգումից:

վերլուծությունը իրականացվում է ընթացիկ կամ տարեկան հաշվետվությունների հիման վրա և բնորոշվում է համակարգային և գործոնային մոտեցումներով, ինչպես նաև վերլուծական այնպիսի հնարքների օգտագործմամբ, ինչպես միջին և հարաբերական վերլուծությունները և այլն:

վերստուգումը ստուգում իրականացնող մարմնի կողմից նույն տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկ տարվա ընթացքում կատարված երկրորդ (կրկնակի) ստուգումն է:

Ֆինանսական վերահսկողության տեսակները և իրականացնող մարմինները
Տեսակները.

ըստ իրականացնողների՝

1. օրենսդիր մարմնի կողմից իրականացվող
Համաձայն ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածի, ՀՀ ԱԺ «վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ»: ՀՀ պետբյուջեի կատարման մասին հաշվետվության մասին եզրակացություն է ներկայացնում ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատը, որը ֆինանսատնտեսական աուդիտ իրականացնող կազմակերպություն է և գործում է 1996թ. մայիսի 29-ի «ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի մասին» օրենքի համաձայն:

2. գործադիր մարմնի կողմից իրականացվող
ՀՀ Սահմանադրության 89 հոդվածի 2-րդ մասի համաձայն, ՀՀ կառավարությունն իր լիազորությունների սահմաններում իրականացնում է պետբյուջեի կազմումը և կատարումը, դրամաշրջանառության ամրապնդմանն ուղղված միջոցառումների կատարումը, պետության ապահովագրման մարմինների աշխատանքը:

3. ֆինանսների նախարարության կողմից իրականացվող
Վերահսկում է պետական մարմինների, բյուջետային ֆինանսավորում ստացող հիմնարկների, կազմակերպությունների կողմից բյուջետային միջոցների ճիշտ և նպատակային օգտագործումը, ֆինանսական կարգապահության կանոնների պահանջների կատարումը և այլն:

4. հարկային մարմինների կողմից իրականացվող
ՀՀ պետբյուջե մուտքագրվող հարկերի և այլ վճարների ճիշտ և ժամանակին մուտքը վերահսկելու պարտականությունը դրված է ՀՀ հարկային մարմինների վրա, որը գործում է «Հարկերի մասին» և «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման ու անցկացման մասին» ՀՀ օրենքներով:

5. ՀՀ Կենտրոնական բանկի կողմից իրականացվող
ՀՀ ԿԲ վերահսկում է առևտրային բանկերի և այլ ֆինանսական մարմինների գործունեությունը: Այն ուղղված է դրամավարկային համակարգի կայունության ապահովմանը, բանկերի և այլ վարկային կազմակերպությունների, վարկատուների և ավանդատուների շահերի պաշտպանությանը:

6. գերատեսչական վերահսկողություն
Այն իրականացվում է հիմնարկների, կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հիման վրա: Այն իրականացվում է համակարգի ներսում և շատ դեպքերում կոչվում է ներտնտեսական վերահսկողություն:

Ըստ իրականացման ժամանակի՝

1. նախնական

Նախնական վերահսկողությունը կանխիչ և նախագրուշացնող բնույթ ունի: Անցկացվում է ստուգվող սուբյեկտի կողմից, նախքան որոշակի ֆինանսական գործողության կատարումը: Օրինակ, ՀՀ Ֆինանսների նախարարության զանձապետարանն իրականացնում է նախնական վերահսկողություն ՀՀ և համայնքների բյուջեների նկատմամբ:

2. միաժամանակյա
Միաժամանակյա կամ ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է ֆինանսական գործունեության ընթացքում և օպերատիվ բնույթ ունի:

3. հետագա
Հետագա վերահսկողությունը իրականացվում է իրավական ակտի ընդունման պահից որոշակի ժամանակ անցնելուց հետո: Թույլ է տալիս ամփոփել արդյունքները և վերլուծել կատարումը:

Ըստ կիրառման՝

- 1. առևտրային հաշվետվությունների միջոցով
- 2. կատարման ստուգման և վիճակագրական տվյալների վերլուծության միջոցով
- 3. ֆինանսական նախագծերի վերահսկողության միջոցով
- 4. ֆինանսատնտեսական գործունեության քննարկումների միջոցով
- 5. տեղեկությունների ստուգման միջոցով, և այլն:

Ըստ ստուգման եղանակի՝

- 1. փաստաթղթային
- 2. փաստացի:

Հաշվապահական հաշվառման իրականացման կարգավորումը

Հաշվապահական հաշվառումը կարևոր դեր ունի ֆինանսական վերահսկողության գործում: ՀՀ-ում հաշվապահական հաշվառումը կազմակերպելու և վարելու, ֆինանսական հաշվետվություններ կազմելու և ներկայացնելու միասնական հիմունքները կարգավորվում են 2002թ. դեկտեմբերի 26-ի «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով:

Հաշվապահական հաշվառման կարգավորումն իրականացնում է ՀՀ ֆինանսների նախարարությունը իսկ բանկերում՝ ֆինանսների նախարարությունը և Կենտրոնական բանկը՝ համատեղ:

Կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները իրենց վրա ազդող իրադարձությունների և իրականացրած գործառնությունների կառուցվածքային ֆինանսական ներկայացումն է:

ՀՀ ֆինանսների նախարարությունը իր իրավասության սահմաններում հաստատում է կազմակերպությունների համար պարտադիր կատարման ենթակա՝

1. հաշվապահական հաշվառման ստանդարտները
2. հաշվապահական հաշվառման հաշվային պլանները և դրանց կիրառման մասին հրահանգները
3. այս ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր:

Ինքնաստուգման հարցեր

1. Ֆինանսական վերահսկողության հասկացությունը և նշանակությունը:
2. Ֆինանսական վերահսկողության բովանդակությունը:
3. Ֆինանսական վերահսկողության ձևերն ու մեթոդները:
4. Ֆինանսական վերահսկողության տեսակները:

ԳԼՈՒԽ 4. ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԸ. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

Թեմայի նպատակը՝ ներկայացնել ՀՀ բյուջետային համակարգը, ՀՀ պետական և տեղական բյուջեների դերը և նշանակությունը: Կներկայացվեն նաև ՀՀ բյուջետային համակարգի ընդհանուր սկզբունքները, ՀՀ համախմբված բյուջեի հասկացությունը, բյուջեի հիմնական հատկանիշները: Կպարզաբանվեն բյուջետային հարաբերությունների հիմնական սկզբունքները, պետական բյուջեի կառուցվածքը և բյուջետային գործընթացը:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողը կկարողանա՝

- ներկայացնել ՀՀ բյուջետային համակարգը
- պատկերացում կազմել ՀՀ պետական և տեղական բյուջեների դերի և նշանակության մասին
- պատկերացնել ՀՀ բյուջետային համակարգի ընդհանուր սկզբունքները, ՀՀ համախմբված բյուջեի հասկացությունը, բյուջեի հիմնական հատկանիշները
- բնորոշել բյուջետային հարաբերությունների հիմնական սկզբունքները, պետական բյուջեի կառուցվածքը և բյուջետային գործընթացը:

ՀՀ պետական և տեղական բյուջեների դերը և նշանակությունը

Բյուջեն ֆինանսական իրավունքի կենտրոնական ինստիտուտն է: Պետական և տեղական բյուջեների միջոցով ստեղծվում են պետության և տեղական ինքնակառավարման մարմինների դրամական ֆոնդերը, որոնք հանդիսանում են այդ մարմինների գործառնությունների իրականացման ֆինանսական հիմքը: Բյուջեներն, ըստ էության, ֆինանսական ծրագրեր են:

ՀՀ բյուջետային համակարգն իրավունքի նորմերով կարգավորվող ՀՀ տնտեսական հարաբերությունների և ՀՀ պետական կառուցվածքի վրա հիմնված հետևյալ երկու մակարդակի ամբողջությունն է.

1. պետական բյուջե
2. համայնքների բյուջեներ:

ՀՀ բյուջետային համակարգը կարգավորվում է 1997թ. հուլիսի 21-ի «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով:

ՀՀ բյուջետային համակարգը հիմնվում է հետևյալ ընդհանուր սկզբունքների վրա.

- ա. բյուջետային համակարգի միասնականություն
- բ. բյուջետային համակարգի մեջ մտնող տարբեր մակարդակների բյուջեների միջև բյուջետային մուտքերի և ելքերի միասնականություն
- գ. բյուջեների ինքնուրույնություն
- դ. բյուջեների մուտքերի և ելքերի արտացոլման ամբողջություն
- ե. բյուջեների հաշվեկշռվածություն
- զ. բյուջեների ելքերի ամբողջական (համախառն) ծածկվածություն
- է. բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետություն
- ը. բյուջեների հրապարակայնություն
- թ. բյուջետային միջոցների հասցեագրվածություն և նպատակայնություն
- ժ. բյուջեների իրատեսություն:

(Սկզբունքների մանրամասն պարզաբանումը տրվում է նշված օրենքի 8-րդ հոդվածում:)

ՀՀ Համախմբված բյուջեն ներառում է պետական և համայնքների բյուջեները և պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեն՝ իրենց մուտքերի և ելքերի հանրագումարներով:

Բյուջեի հիմնական բնորոշ հատկանիշներն են.

1. այն դրամական միջոցների ֆոնդ է
2. այն հիմնական ֆինանսական ծրագիր է
3. այն օրենք է
4. այն քաղաքական փաստաթուղթ (քաղաքական պայքարի/համաձայնության արդյունք) է:

Բյուջետային իրավունքի հարաբերությունները լինում են հետևյալ հիմնական խմբերի.

1. բյուջետային համակարգի կազմակերպման, դրա կառուցվածքի սահմանման
2. բյուջեների միջև եկամուտների բաշխման, բյուջետային ծախսերի սահմանազատման
3. բյուջետային դասակարգման և բյուջեներում փոփոխությունների և լրացումների կատարման
4. բյուջեի կազմավորման և կատարման
5. հաշվետվությունների և հսկողության:

ՀՀ պետական բյուջեի կառուցվածքը

Յուրաքանչյուր բյուջե բաղկացած է երկու ինքնուրույն առանձին-առանձին հաստատվող մասերից՝ եկամուտներից և ծախսերից:

Պետական բյուջեի եկամուտները.

Պետական բյուջեի եկամուտները ձևավորվում են տարբեր աղբյուրների հաշվին: Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» 1997թ. օրենքի, դրանք ներառում են տվյալ բյուջեի համար օրենքով սահմանված.

- ա. եկամուտները
- բ. փոխառու միջոցները
- գ. ներգրավված այլ միջոցները:

Պետբյուջեի եկամուտները բաժանվում են.

- ա. ներքին եկամուտների (ներքին բոլոր աղբյուրները)

բ. արտաքին եկամուտների (այլ երկրների և միջազգային կազմակերպությունների կողմից տրվող փոխառու/այլ միջոցները):

Պետությունի եկամուտները ըստ կազմի լինում են.

ա. ամրագրված (ամրագրված են բաժնեմասով կամ տոկոսադրույքով, մշտապես կամ երկարաժամկետ հիմքի վրա, օրինակ, հողի և գույքի հարկի 95% մուտքագրվում է համապատասխան համայնքների բյուջեներ)

բ. կարգավորվող (բաշխվում են տվյալ տարվա համար):

Պետությունի եկամուտներն ըստ աղբյուրների լինում են.

ա. հարկային եկամուտներ

1. ԱԱՀ
2. ակցիզային հարկ
3. շահութահարկ
4. եկամտահարկ
5. հողի հարկ (5%)
6. գույքահարկ (5%)
7. հաստատագրված վճարներ
8. հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքներ և տուրքեր

բ. տուրքեր

1. մաքսային տուրքեր
2. պետական տուրքեր

գ. ոչ հարկային այլ եկամուտներ

1. ՀՀ ԿԲ ծախսերի նկատմամբ եկամուտների դրական տարբերություն
2. դիվիդենդներ և շահաբաժիններ
3. պետական կազմակերպությունների և գույքի (այդ թվում հողերի) վարձակալական/օգտագործման վճարներ
4. պետության վարկերի օգտագործման դիմաց տոկոսներ
5. բռնագրավված, տիրազուրկ, ժառանգության իրավունքով գույքի իրացումից ստացված մուտքեր
6. պետական վիճակախաղերի իրացումից ստացվող գումարներ
7. իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների որոշմամբ գանձված միջոցներ
8. այլ եկամուտներ:

դ. եկամուտներ կապիտալի զարժանություններից

1. պետությանը պատկանող հիմնական միջոցների մուտքեր
2. բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող մուտքեր
3. պետպահուստների ապրանքանյութական արժեքների իրացման մուտքեր
4. պետական հողի և ոչ նյութական արժեքների իրացման մուտքեր:

ե. մուտքեր՝ պաշտոնական տրանսֆերտներից

1. օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների տրամադրված տրանսֆերտներ
2. այլ աղբյուրներից ստացված տրանսֆերտները:

Հավասարակշռվածության սկզբունքը

Որպես կանոն, սկզբից հաստատվում է բյուջեի եկամուտների մասը: Այն դեպքում, երբ ծախսերը գերազանցում են եկամուտները, առաջանում է բյուջեի պակասորդ (դեֆիցիտ): Եկամուտների գերազանցման դեպքում առաջանում է բյուջեի հավելուրդ: Դեֆիցիտի չափը սահմանվում է տվյալ տարվա բյուջեի մասին օրենքով և չի կարող գերազանցել տվյալ տարվա ՀՆԱ-ի 10%: Դա ծածկելու համար բացի կարգավորվող եկամուտներից օգտագործվում են նաև այլ միջոցներ: Դրանք են լրավճարները (դրտացիաները) և սուբվենցիաները:

Լրավճարը պետական բյուջեից տրվում է տեղական (համայնքային) բյուջե պակասորդը ծածկելու համար:

Սուբվենցիան պետական բյուջեից տրվում է տեղական բյուջե որոշակի ժամկետով և նպատակով: Լինում է *ընթացիկ և ներդրումային*:

Պետական ներքին պարտքը լինում է պետական վարկի և բանկային վարկի տեսքով:

Պետական վարկը

ի տարբերություն լրավճարների և սուբվենցիաների՝ պետական եկամուտների մեջ ներգրավվող վերադարձելի և հատուցելի միջոցն է: Այն լինում է *պետական պարտատոմսերի* (ներդրումային արժեթուղթ) և *կառավարության մուրհակների* (վճարային արժեթուղթ) ձևով:

Բյուջետային վարկը համայնքներին և այլ անձանց պետությունից տրվող վերադարձելի, ժամկետային և վճարովի միջոցներն են:

Բյուջետային փոխառությունները համայնքներին պետությունից տրվող անվճար, տվյալ տարում վերադարձման ենթակա միջոցներն են:

Բյուջետային վարկերի և փոխառությունների տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը:

Պետական բյուջեի ծախսերը

Պետությունի ծախսերը բաժանվում են՝

ա. կապիտալ ծախսերի

բ. ընթացիկ ծախսերի:

Կապիտալ ծախսերն այն ծախսերն են, որոնք կառավարության սահմանված կարգով հանգեցնում են հիմնական միջոցների, պահուստների ստեղծման նպատակով ապրանքային արժեքների ձեռքբերմանը կամ դրանց արժեքի ավելացմանը:

Ընթացիկ ծախսերն այն ծախսերն են, որոնք ընդգրկված չեն կապիտալ ծախսերում: Բյուջեի պակասորդի դեպքում առաջին հերթին ֆինանսավորվում են ընթացիկ ծախսերը:

Կարևոր տեղ են զբաղեցնում *բյուջետային երաշխիքները*: Բյուջետային երաշխիքների տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը: Մեծությունը չի կարող գերազանցել նախորդ տարվա հարկային եկամուտների որոշակի տոկոսը:

Պետական բյուջեի ծրագրերի և ծախսերի հիմնական ուղղություններն են՝

1. ընդհանուր բնույթի պետական ծառայություններ
2. պաշտպանություն
3. հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն
4. կրթություն և գիտություն
5. առողջապահություն
6. սոցիալական ապահովագրություն և ապահովություն
7. բնակարանային, կոմունալ տնտեսություն
8. մշակույթ, սրորտ, կրոն
9. վառելիքաէներգետիկ համալիր
10. գյուղական, անտառային, ջրային տնտեսություն և ձկնաբուծություն
11. լեռնահանքային արդյունաբերություն և հանքային հանածոներ վերամշակող արդյունաբերություն, շինարարություն և բնապահպանություն
12. տրանսպորտ, կապ, ճանապարհային տնտեսություն
13. այլ ծախսեր, այդ թվում.

ա. կառավարության պահուստային ֆոնդ (կազմում է որոշակի տոկոս և օգտագործվում է կառավարության որոշումների հիման վրա)

բ. համայնքային բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ

14. համայնքային բյուջեներին պատվիրակված լիազորությունների համար հատկացումներ, կապիտալ ծախսերի ֆինանսավորման սուբվենցիաներ
15. առանձին տողով կարող են նախատեսվել ֆինանսների նախարարության, հարկային/մաքսային մարմինների խրախուսման ֆոնդեր:

ՀՀ բյուջետային գործընթացը

ՀՀ *բյուջետային գործընթացը*...յուրաքանչյուր բյուջետային տարվա համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների օրենքով կանոնակարգված գործունեությունն է ուղղված համապատասխան բյուջեների ընդունմանը և կատարման հաշվետվության ըստ հետևյալ փուլերի.

1. բյուջեի նախագծի կազմում (ներառում է ՀՀ կառավարության բյուջետային ուղերձը և բյուջետային օրենքի նախագիծը)
 2. բյուջեի նախագծի քննարկում (ՀՀ Ազգային ժողովում)
 3. բյուջեի հաստատում (ընդունում) (ՀՀ Ազգային ժողովում ում)
 4. բյուջեի կատարում (կազմակերպում է ՀՀ ֆինանսների նախարարությունը)
 5. բյուջեի կատարման մասին հաշվետվությունների քննարկում և ընդունում (ՀՀ Ազգային ժողովում):
- ՀՀ բյուջետային գործընթացը կազմակերպվում է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի համաձայն:

Ինքնաստուգման հարցեր

1. ՀՀ բյուջետային համակարգ հասկացությունը և սկզբունքները:
2. ՀՀ համախմբված բյուջե:
3. Բյուջետային հարաբերությունների հիմնական սկզբունքները:
4. ՀՀ պետական բյուջեի կառուցվածքը:
5. Բյուջետային դեֆիցիտը և դրա ծածկման եղանակները:
6. Պետական բյուջեի ծախսերի հիմնական ուղղությունները:
7. ՀՀ բյուջետայի գործընթացի փուլերը:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԸ, ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Թեմայի նպատակը՝ ներկայացնել համայնքների բյուջեների, պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի և բյուջետային դասակարգման հասկացությունը և սկզբունքները, կառուցվածքը և գործընթացի փուլերը:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեմայի ավարտից հետո ուսանողը պատկերացում կունենա համայնքների բյուջեների, պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի և բյուջետային դասակարգման հասկացության և սկզբունքների, կառուցվածքի և գործընթացի փուլերի վերաբերյալ:

Համայնքների բյուջեները

Հայաստանի Հանրապետությունը վարչատարածքային առումով բաժանված է մարզերի և համայնքների: Մարզերը կազմված են գյուղական և քաղաքային համայնքներից: Մարզերում իրականացվում է պետական կառավարում, իսկ համայնքներում՝ տեղական ինքնակառավարում:

Կառավարությունը մարզերում նշանակում և ազատում է մարզպետների (Երևանի քաղաքապետին վարչապետի ներկայացմամբ նշանակում և ազատում է ՀՀ նախագահը), որոնք իրականացնում են կառավարության տարածքային քաղաքականությունը: Մարզերը (Երևանը) չունեն սեփական բյուջե և ֆինանսավորվում են հանրապետական բյուջեից:

Համայնքների սեփականությունը (բյուջեն) տնօրինելու և համայնքային նշանակության հարցերը լուծելու նպատակով գործում են տեղական ինքնակառավարման մարմիններ: Երեք տարի ժամկետով ընտրվում են համայնքի ավագանի (5-15 մարդ) և ղեկավար (քաղաքապետ, գյուղապետ):

Համայնքի ավագանին ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի բյուջեն, վերահսկում բյուջեի կատարումը, օրենքի շրջանակներում սահմանում տեղական տուրքեր և վճարներ:

Համայնքների բյուջեները ձևավորվում են հետևյալ սկզբունքներով.

1. համայնքի զարգացման եռամսյա ծրագրերի պլանավորում
2. պահուստային ֆոնդի ստեղծում
3. հավասարակշռություն
4. խնայողականություն
5. արդյունավետություն
6. հավաստիություն և հստակություն (վերահսկողությունն ապահովելու համար)
7. հրապարակայնություն (համայնքի անդամների համար):

Համայնքի բյուջեի կառուցվածքը

1. վարչական մաս
2. ֆոնդային մաս:

Յուրաքանչյուր մասը պետք է հավասարակշռված լինի:

Վարչական մասը ներառում է եկամուտների մասով.

1. հարկային եկամուտներ
 - ա. հողի հարկը (95%)
 - բ. գույքահարկը (95%)
 - գ. եկամտահարկը (15%)
 - դ. օրենքով սահմանված այլ հարկատեսակներից մասհանումներ
 - ե. հարկային իրավախախտումների համար որոշ տույժեր/տուգանքներ
 - զ. օրենքով սահմանված այլ հարկեր:
2. տուրքեր
 - ա. պետական տուրքը.
 - Քաղաքացիական Կացության Ակտերի Գրանցման (“ՁԱԳՍ”).
 - նոտարական գործառնությունների համար.
 - բ. օրենքով սահմանված տեղական այլ տուրքեր:
3. ոչ հարկային այլ եկամուտներ
 - ա. համայնքի և պետական հողերի վարձավճարները
 - բ. սեփական գույքի վարձավճարները
 - գ. վարչական իրավախախտումների համար տեղական մարմինների կիրառած տուժամիջոցները
 - դ. համայնքային սեփականության կազմակերպությունների շահույթից
 - ե. տեղական վճարներ
 - զ. տեղական մարմինների կողմից գանձվող և հաշվանցմամբ տեղական բյուջեներին տրամադրվող այլ վճարներ
4. պաշտոնական տրանսֆերտներ
 - ա. պետբյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ (համաձայն «Ֆինանսական համահարթեցման մասին» 1998թ. դեկտեմբերի 23 ՀՀ օրենքի):
 - բ. այլ աղբյուրներից ստացվող տրանսֆերտներ:

Վարչական մասը ներառում է ծախսերի մասով.

օրենքով տեղական մարմիններին վերապահված լիազորությունների շրջանակներում ընթացիկ ծախսերը, այդ թվում.

1. ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների համար

2. պաշտպանության բնագավառում
3. հասարակական կարգի և անվտանգության համար
4. կրթության և գիտության համար
5. առողջապահության համար
6. սոցիալական ապահովության և ապահովագրության համար
7. մշակույթի, սպորտի, կրոնի համար
8. պահուստային փոնդ (չպետք է լինի ավելի, քան վարչական մասի 30%) և այլն:

Ֆոնդային մաս.

Ֆոնդային մասը ներառում է եկամուտների մասով.

1. պետբյուջեից կապիտալ ծախսերի նպատակային ֆինանսավորում (սուբվենցիաներ)
2. այլ աղբյուրներից կապիտալ ծախսերի ֆինանսավորում
3. տեղական մարմինների սեփական կազմակերպությունների շահույթից եկամուտներ
4. համայնքի սեփական գույքի (այդ թվում ժառանգական, տիրագուրկ) օտարումից եկամուտներ
5. վարկեր, փոխատվություններ, այդ թվում տեղական կարճաժամկետ պարտատոմսեր (ՏԿՊ)
6. համայնքի վարչական բյուջեից փոխանցումներ (պահուստային ֆոնդից)
7. ներդրումներից եկամուտներ:

Ֆոնդային մասը ներառում է ծախսերի մասով հետևյալ ոլորտները.

1. կապիտալ շինարարություն
2. կապիտալ վերանորոգում
3. վարկերի և ներգրավված այլ միջոցների մարման ծախսեր
4. ապրանքանյութական արժեքների պահուստների ծախսեր
5. օրենքով համայնքներին պատվիրակված լիազորությունների ծախսեր:

Համայնքային բյուջեի գործընթացի փուլերը

1. Բյուջեի նախագծի կազմում (համայնքի ղեկավար):
2. Նախագծի քննարկում և հաստատում (համայնքի ավագանի) (այս փուլում, կատարվում են համապատասխանացումներ պետբյուջեի հետ, մարզպետը ստուգում ք այն և ներկայացնում ՀՀ Ֆինանսների նախարարությանը տրվող մարզի բյուջեների ամփոփ տեղեկանքում)
3. Կատարում (իրականացնում է ղեկավարը, սպասարկում է ՀՀ Ֆինանսների նախարարության տեղական գանձապետական բաժանմունքը):
4. Կատարման հաշվետվությունը (ղեկավարը ներկայացնում է մինչև հաշվետու եռամսյակի հաջորդող 15-ը համայնքի ավագանուն և մարզպետին, իսկ տարեկանը՝ առաջիկա առաջին հաշվետվության հետ): Տարեկան հաշվետվությունը հաստատվում է ավագանու կողմից՝ առևտրական կազմակերպության եզրակացության առկայությամբ:

ՊԱՐՏԱԴՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

ՀՀ Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեն պետական բյուջեի մասին օրենքի բաղկացուցիչ մաս կազմող պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեին վերաբերող առանձին հավելվածն է:

Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի կառուցվածքը

Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեն ներառում է.

- ա. պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի եկամուտները և ծախսերը
- բ. պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի ղեֆիցիտը (պակասուրդը) կամ հավելուրդը և ղեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ ըստ օրենքով սահմանված դասակարգման:

Եկամուտները

Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի մուտքերի աղբյուրներն են.

1. պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները
2. ոչ հարկային եկամուտները
3. կապիտալի գործառնություններից եկամուտները
4. պաշտոնական տրանսֆերտները
5. ղեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները

Ծախսերը

Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի ելքերի ուղղություններն են.

Բյուջեից ֆինանսավորվում են օրենքով սահմանված լիազորված մարմնին վերապահված գործառույթները:

Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի կազմումը և հաստատումը.

Նախագծի մշակումն ու քննարկումը կազմակերպում է ՀՀ կառավարությունը և պետական բյուջեի նախագծի կազմում ներկայացնում ՀՀ ԱԺ քննարկմանը և հաստատմանը պետական բյուջեի մասին օրենքով:

Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի կատարումը և կատարման տարեկան հաշվետվությունը

Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեն իրականացվում է պետական գանձապետական համակարգի միջոցով: Կառավարությունը, յուրաքանչյուր տարվա պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ՀՀ Ազգային ժողով է ներկայացնում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը՝ պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ միասին:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՂԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Բյուջետային դասակարգման նպատակն է ապահովել տարբեր բյուջեների կազմումը միասնական ցուցանիշներով՝ համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի: Դա եկամուտների և ծախսերի խմբավորումն է ըստ տեսակների և ուղղությունների:

Բյուջետային դասակարգման կառուցվածքը.

Բյուջետային դասակարգումն ունի հետևյալ կառուցվածքը.

1. եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ
 - ա. ընդամենը եկամուտներ
 - ընթացիկ եկամուտներ (հարկեր, տուրքեր, ոչ հարկային)
 - կապիտալ գործառնություններից եկամուտներ (կապիտալ սեփականության օտարում և այլն)
 - բ. պաշտոնական տրանսֆերտներ
2. ծախսեր և վարկավորում (հանած մարումը)
 - ա. ընդամենը ծախսեր
 - աշխատավարձ
 - ընթացիկ տրանսֆերտներ (դոտացիաներ, թոշակներ, նպաստներ և այլն)
 - կապիտալ ծախսեր և այլն:
 - բ. վարկավորում հանած մարումներ
3. պետբյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ և բյուջեի պարտքեր:

Ինքնաստուգման հարցեր

1. Համայնքների բյուջեներ հասկացությունը:
2. Համայնքային բյուջեների ձևավորման սկզբունքները:
3. Համայնքային բյուջեի կառուցվածքը:
4. Համայնքային բյուջեի գործընթացի փուլերը:
5. Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե հասկացությունը և կազմը:
6. Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի կազմումը, հաստատումը:
7. Պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի կատարումը և կատարման տարեկան հաշվետվությունը:
8. Բյուջետային դասակարգման նպատակը և կառուցվածքը:

ԳԼՈՒԽ 6. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ

Թեմայի նպատակը՝ ներկայացնել հարկերի դերը և հասկացությունը որպես ֆինանսական իրավունքի կարևոր ինստիտուտ, հարկերի դասակարգումը և իրավական աղբյուրները, ինչպես նաև հարկային իրավահարաբերությունների խախտումների պատասխանատվությունը:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողները կկարողանան

- բնորոշել հարկերի դերը և հասկացությունը որպես ֆինանսական իրավունքի կարևոր ինստիտուտ
- ներկայացնել հարկերի դասակարգումը և իրավական աղբյուրները
- մեկնաբանել հարկային իրավահարաբերությունների խախտումների համար պատասխանատվությունը:

Հարկերի հասկացությունը

Հարկերն օգտագործվում են որպես ֆինանսական միջոցների բաշխման և վերաբաշխման իրավական ձև: Հարկերի միջոցով տեղի է ունենում ֆինանսական միջոցների կուտակում՝ պետության և հասարակական պահանջների բավարարման, խնդիրների լուծման և ծրագրերի իրականացման համար:

Սահմանում. Համաձայն «Հարկերի մասին» 1997թ. ՀՀ օրենքի. «Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում»:

Հարկը իր բովանդակությամբ ունի տնտեսական և իրավական նշանակություն: Տնտեսական տեսանկյունից այն նման է բյուջե գանձվող այլ գանձույթների: Իրավական տեսանկյունից հարկը ուղղակիորեն անհատուցանելի պարտավորություն է:

Հարկերի բնորոշ տարրերը

Հարկ հասկացությունն ունի մի շարք բնորոշ տարրեր.

- ա. *իրավական նորմ է՝* այսինքն ունի օրենքի ուժ և պարտադիր է հարկատուների համար
- բ. *ուճի հարկային տուբյեկտ՝* այն ֆիզիկական և իրավաբանական անձը, որն ունի հարկման օբյեկտ
- գ. *ուճի հարկման օբյեկտ՝* այն իրավաբանական հարաբերություններն են, որ առաջացնում են հարկ վճարելու պարտականություն (եկամուտ, շահույթ, գույք)
- դ. *ուճի հարկման առարկա՝* այն իրերը, գործողությունները, որոնց կապակցությամբ առաջանում են հարկային հարաբերություններ (գույք, ապրանք, և այլն): Այսինքն դրանց կապակցությամբ, բայց ոչ միշտ:
- ե. *ուճի հարկման բազա՝* այն գույքային բազան, որի նկատմամբ կիրառվում է հարկի դրույքաչափը: Այն կարող է համընկնել կամ ոչ հարկման օբյեկտին:
- զ. *ուճի հարկման միավոր՝* որով չափվում է հարկման բազան, օրինակ, դրամ, ծիաուժ և այլն:
- է. *ուճի հարկային ժամանակաշրջան՝* որի ընթացքում ձևավորվում է հարկային բազան:
- ը. *ուճի հարկի դրույքաչափ՝* հարկի չափը, սահմանված հարկման միավորի համար (տոկոսներ, կայուն գումար. օրինակ, նվազագույն աշխատավարձ):
- թ. *ուճի հարկի վճարման կարգ՝* վճարման եղանակը, ձևը, ժամկետները:

Հարկերի դասակարգումը

Հարկերի տեսակներն են.

ըստ գանձման եղանակի՝

- ա. ուղղակի հարկեր՝ գանձվում են նյութական բարիքների կուտակման ընթացքում անմիջականորեն հարկման օբյեկտից (շահութահարկ, գույքահարկ)
- բ. անուղղակի հարկեր՝ հավելումներ, որ ներառվում են ապրանքի/ծառայության գնի մեջ և գանձվում են նյութական բարիքների ծախսման ժամանակ՝ ապրանքի գնի միջոցով (ԱԱՀ, ակցիզային հարկ):

ըստ հարկատուների՝

ա. *իրավաբանական անձանցից գանձվող (շահութահարկ)*

բ. *ֆիզիկական անձանցից գանձվող (եկամտահարկ)*

գ. *խառը (գույքահարկ):*

ըստ հարկերի մասին օրենքի՝

ա. *շահութահարկ*

բ. *եկամտահարկ*

գ. *ակցիզային հարկ*

դ. *ավելացված արժեքի հարկ*

ե. *գույքահարկ*

զ. *հողի հարկ:*

Հարկային իրավահարաբերությունների աղբյուրները

Հարկային իրավահարաբերությունների աղբյուրներն են

- ա. հարկային օրենսդրություն («Հարկերի մասին» և առանձին հարկատեսակների մասին օրենքներ)
- բ. ՀՀ կառավարության որոշումներ (օրենքով նախատեսված դեպքերում)
- գ. ՀՀ հարկային և այլ մարմինների որոշումներ (կառավարության կողմից սահմանված դեպքերում):

Հարկային կանխավճարը

Հարկային վճարների բյուջե հավասարաչափ մուտքագրումն ապահովելու համար որոշ հարկատեսակների գծով օրենքը սահմանում է հարկային կանխավճար: Դա հարկ վճարելու եղանակ է՝ փոխառության տեսքով, որի ժամանակ մուտքագրումները բյուջե կատարվում են մինչև հարկի վճարման ժամկետը: Հարկային կանխավճարների գանձման դեպքերը և կարգը սահմանվում են միայն օրենքով:

Պատասխանատվությունը հարկային իրավահարաբերություններում

Հարկը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության այլ պահանջները պահպանելու պատասխանատվությունը դրվում է հարկ վճարողների, դրանց կազմակերպությունների օրենքով նախատեսված պաշտոնյաների վրա:

Հարկային օրենսդրության խախտման համար նախատեսված են ֆինանսական, վարչական և քրեաիրավական սանկցիաներ:

Մյուս կողմից, հարկային մարմնի կողմից իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով հարկատուներին պատճառած վնասը (ներառյալ՝ բաց թողնված եկամուտը) հատուցվում է օրենքով սահմանված կարգով:

Ինքնաստուգման հարցեր

4. Հարկեր հասկացությունը և բաղադրատարրերը:
5. Հարկերի դասակարգումը:
6. Պատասխանատվությունը հարկային իրավախախտումների համար:

ԳԼՈՒԽ 7. ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐ

Թեմայի նպատակը՝ ներկայացնել առանձին հարկատեսակների էությունը և դրանք կարգավորող իրավական ակտերը:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողները կկարողանան բնորոշել առանձին հարկատեսակների էությունը և դրանք կարգավորող իրավական ակտերը:

ՀՀ հարկատեսակները

Ինչպես նշվել էր, ըստ «Հարկերի մասին» 1997թ. ՀՀ օրենքի, Հայաստանում գործում են հետևյալ հիմնական հարկատեսակները.

1. շահութահարկ
1. եկամտահարկ
2. ակցիզային հարկ
3. ավելացված արժեքի հարկ
4. գույքահարկ
5. հողի հարկ:

Օրենքով սահմանված կարգով գործում են նաև հետևյալ *փոխարինող հարկերը*.

1. հաստատագրված վճարները և
2. պարզեցված հարկը:

Շահութահարկ

«Շահութահարկի մասին» 1997թ. դեկտեմբերի 27-ի ՀՀ օրենքը սահմանում է շահութահարկի որոշման և վճարման հետ կապված հարաբերությունները, շահութահարկ վճարողների շրջանակը, շահութահարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը:

Շահութահարկը՝ օրենքով սահմանված կարգով և չափով (իրավաբանական անձանց կողմից), պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

Եկամտահարկ

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 1997թ. դեկտեմբերի 30-ին: Դրանով սահմանվում են եկամտահարկի որոշման և վճարման հետ կապված հարաբերությունները, հարկատուների շրջանակը, դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը:

Եկամտահարկը՝ հարկ վճարողների կողմից (ֆիզիկական անձանց) օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

Ակցիզային հարկ

Ակցիզային հարկը կարգավորվում է 2000թ. հունիսի 27-ի «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով:

Ակցիզային հարկը որոշ ապրանքների համար սահմանված ապրանքի գնի մեջ մտնող անուղղակի հարկ է: Վճարում են ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Օրինակ, ակցիզային հարկով հարկվում են գարեջուրը, խաղողի գինիները, սպիրտը, ծխախոտը, բենզինը, մի շարք նավթամթերքներ և այլն:

Ավելացված արժեքի հարկ

ԱԱՀ-ն անուղղակի հարկ է, որը վճարվում է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, ՀՀ տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: Հիմնականում վճարվում է իրավաբանական անձանց կողմից:

Այս հարցերը կարգավորվում են «Ավելացված արժեքի հարկի մասին» 1997թ. հունիսի 16-ի ՀՀ օրենքով:

Գույքահարկ

Գույքահարկը սահմանվել է «Գույքահարկի մասին» 1998թ. հունվարի 3-ի օրենքով:

Գույքահարկը հարկատուներին (ֆիզիկական և իրավաբանական անձանց) սեփականության կամ տնտեսավարման իրավունքով պատկանող համապատասխան գույքի համար օրենքով սահմանված կարգով և չափով վճարվող ուղղակի հարկ է:

Գույքահարկի օբյեկտ են հանդիսանում շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ: Այն հաստատուն է և կախված չէ հարկատուների տնտեսական գործունեությունից:

Գույքահարկ չեն վճարում ՀՀ բյուջետային հիմնարկները, Կենտրոնական բանկը և տեղական ինքնակառավարման մարմինները:

Հողի հարկ

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 1994թ. ապրիլի 27-ին:

Հողի հարկ վճարողներն են հողի սեփականատերերը, պետական հողերի մշտական և ժամանակավոր օգտագործողները:

Ընդ որում, օրենքը տարբերակում է գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերը:

Փոխարինող հարկեր

Փոխարինող հարկերն օրենքով սահմանված դեպքերում և կարգով փոխարինում են մի շարք հարկերի. շահութահարկ, եկամտահարկ, ավելացված արժեքի հարկ:

«Հաստատագրված վճարների մասին» 1998թ. հուլիսի 7-ի օրենքի համաձայն, հաստատագրված վճարը սահմանված չափերով և ժամկետներում պետական բյուջե վճարվող ավելացված արժեքի հարկը և (կամ) շահութահարկը (եկամտահարկը) փոխարինող հարկ է:

Հաստատագրված վճարները վճարվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից: Կարող են կիրառվել, օրինակ, 30 քմ պակաս առևտրային մակերեսի, ավտոկանգառների, խաղատների, ավտոտրանսպորտային գործունեության իրականացման դեպքում և այլն:

«Պարզեցված հարկի մասին» 2000թ. հունիսի 19-ի ՀՀ օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեության համար վճարվող պարզեցված հարկը փոխարինում է ավելացված արժեքի և (կամ) շահութահարկը (եկամտահարկը):

Ինքնաստուգման հարցեր

1. Շահութահարկի հասկացությունը և իրավական կարգավորումը:
2. Եկամտահարկի հասկացությունը և իրավական կարգավորումը:
3. Ակցիզային հարկի հասկացությունը և իրավական կարգավորումը:
4. Ավելացված արժեքի հարկի հասկացությունը և իրավական կարգավորումը:
5. Գույքահարկի հասկացությունը և իրավական կարգավորումը:
6. Հողի հարկի հասկացությունը և իրավական կարգավորումը:
7. Փոխարինող հարկերի հասկացությունը և տեսակները:

ԳԼՈՒԽ 8. ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Պետական տուրքեր և վճարներ

Թեմայի նպատակը՝ ներկայացնել պետական ոչ հարկային եկամուտների էությունը, առանձնահատկությունները և տեսակները, պետական տուրքերը և մաքսային վճարները, մաքսատուրքերի տեսակները:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողները կկարողանան

- ներկայացնել պետական ոչ հարկային եկամուտների էությունը, առանձնահատկությունները և տեսակները
- բնորոշել պետական տուրքերը և մաքսային վճարները, մաքսատուրքերի տեսակները:

Պետական ոչ հարկային եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների կարևոր աղբյուրներից են ոչ հարկային եկամուտները: Ոչ հարկային վճարումները և դրանց իրականացման կարգը սահմանվում է օրենքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև՝ այլ մարմինների կողմից: Ոչ հարկային եկամուտները (վճարումները) հարկերի նման վճարվում են իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից համապատասխան բյուջեներ/ հիմնադրամներ:

Պետական ոչ հարկային եկամուտների առանձնահատկությունները

1. Ի տարբերություն հարկային, ոչ հարկային եկամուտների իրավահարաբերությունների մասնակիցներն ունեն փոխկապակցված իրավունքներ և պարտավորություններ: Օրինակ, ոչ հարկային եկամուտներ գանձող կողմը (պետությունը) պարտավորվում է հօգուտ վճարողի իրականացնել որոշակի գործողություններ կամ տրամադրել իրավունքներ՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու, ապրանքները սահմանով անցկացնելու և այլն:

2. Ոչ հարկային վճարումները կարող են լինել պարտադիր և կամավոր (այն դեպքում, երբ հարկային վճարումները միշտ պարտադիր են): Մեծ մասը, սակայն, պարտադիր են: Կամավոր ոչ հարկային եկամուտների թվին են պատկանում պետական արժեթղթերը, պետական վիճակախաղերը և այլն:

3. Ի տարբերություն հարկերի, սրանք առավել նպատակային են: Նպատակայնությունը սահմանվում է նման եկամուտների սահմանման հետ մեկտեղ: Ի տարբերություն դրա, հարկային նպատակները ուղղակիորեն չեն կապվում տվյալ հարկի հետ:

Պետական ոչ հարկային եկամուտների տեսակները

- *ըստ տարածքային սկզբունքի.*

ա. հանրապետական

բ. տեղական

- *ըստ կազմավորման մեթոդների.*

ա. պարտադիր

բ. կամավոր

- *ըստ կուտակման աղբյուրների.*

ա. բյուջեում

բ. արտաբյուջետային ֆոնդերում կուտակվող:

- *ըստ կոնկրետ հիմքերի.*

ա. տուրքեր. դրանցից հիմնականն են (1) պետական տուրքերը և (2) մաքսային տուրքերը: Սրանք պարտադիր մոնոպոլիներ են որոշակի իրավունք/լիզենզիա ստանալու համար.

բ. ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման համար գանձվող վճարներ, որոնք նպատակաուղղված են բնական պաշարների պահպանմանը և վերականգնմանը: Օրինակ, ընդերքի օգտագործման վճար, ջրօգտագործման վճար, անտառային եկամուտներ:

գ. ապահովագրական և այլ վճարները, օրինակ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից վճարվող սոցիալական և այլ արտաբյուջետային ֆոնդեր վճարվող գումարները (կենսաթոշակային, բնակչության զբաղվածության, և այլն):

դ. պետական արժեթղթերի թողարկումից և տեղաբաշխումից, պետական վիճակախաղերի անցկացումից ստացվող:

ե. ապապետականացումից ստացվող եկամուտներ:

զ. տուժամիջոցներից ստացվող եկամուտներ (տույժեր, տուգանքներ, և այլն):

Պետական տուրքերը և մաքսային վճարները

Պետական տուրքեր

Պետական տուրքերը սահմանված են «Պետական տուրքի մասին» 1998թ. ՀՀ օրենքով: Օրենքը սահմանում է տուրքի հասկացությունը, դրա տեսակները, դրույքաչափերը, գանձման և վերադարձման կարգը, վճարողների շրջանակը, արտոնությունները և այլ հարցեր:

Սահմանում. պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված ծառայությունների կամ գործողությունների դիմաց իրավաբանական և ֆիզիկական անձանցից պետական բյուջե, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև համայնքների բյուջեներ մուծվող պարտադիր գանձույթ է:

Պետական տուրքի տեսակները

1. դատարան տրվող դիմումների, բողոքների և այլ գործողությունների համար
2. նոտարական գործողությունների համար
3. քաղաքացիական կացության ակտերի գրանցման (օրինակ. ամուսնություն, ծնունդ, և այլն)
4. ՀՀ քաղաքացիություն ստանալու համար

5. հյուպատոսական ծառայությունների համար
6. պետական գրանցման համար (օրինակ. սեփականության)
7. մշակութային արժեքների արտահանման համար
8. ինտելեկտուալ սեփականության գրանցման (օրինակ. գյուտեր)
9. որոշակի տեղեկանքների, գործողությունների, ծառայությունների համար
10. լիզենզիաների համար
11. օրենքով սահմանված այլ դեպքերում:

Մաքսային վճարներ

Մաքսային վճարները սահմանվում են 2000թ. ընդունված «ՀՀ Մաքսային օրենսգրքով»: Մաքսային վճարները բաժանվում են.

1. մաքսատուրքերի
2. մաքսավճարների
3. մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների:

Սահմանում. մաքսատուրքը ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար մաքսային օրենսգրքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե գանձվող պարտադիր վճար է:

Մաքսատուրքերի տեսակները

- *ըստ գործառնության բնույթի.*

- ա. արտահանման
- բ. ներմուծման
- գ. սեզոնային (գործում են որոշակի սեզոններում):

- *ըստ հաշվարկման մեթոդի.*

- ա. արժեքային
- բ. հաստատագրված
- գ. խառը:

- *ըստ տնտեսական նպատակահարմարության.*

- ա. խրախուսական
- բ. հակազդման (ի պատասխան ՀՀ նկատմամբ կիրառվող միջոցառմանը):

Ինքնաստուգման հարցեր

1. Պետական ոչ հարկային եկամուտների առանձնահատկությունները:
2. Պետական ոչ հարկային եկամուտների տեսակները:

ԳԼՈՒԽ 9. ԱՅԼ ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Տեղական տուրքեր և վճարներ, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ, բնապահպանական և բնօգտագործման վճարներ, ճանապարհային վճարներ

Թեմայի նպատակը՝ շարունակել ոչ հարկային եկամուտների ներկայացումը: Մասնավորապես, ներկայացնել տեղական տուրքերի և վճարների, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների, բնապահպանական և բնօգտագործման վճարների և ճանապարհային վճարների ելությունը և կարգավորումը:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողները կկարողանան բնորոշել տեղական տուրքերի և վճարների, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների, բնապահպանական և բնօգտագործման վճարների և ճանապարհային վճարների ելությունը և կարգավորման առանձնահատկությունները:

Տեղական տուրքեր և վճարներ

«Տեղական տուրքերի և վճարների մասին» 1998թ. ՀՀ օրենքը սահմանում է տեղական տուրքերի և վճարների հասկացությունը, տեղական տուրք և վճար վճարողների շրջանակը, տեղական տուրքերի և վճարների սահմանման, դրանց գանձման կարգն ու պայմանները:

Տեղական տուրքեր

Սահմանում. տեղական տուրքը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված կարգով և չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

Օրենքը սահմանում է նաև տեղական տուրքի տեսակները և երբ տեղական տուրքը կարող է լինել պարբերաբար կամ միանվագ:

Տեղական տուրքի տեսակները

- համայնքի տարածքում շինարարության և այլ շինարարական կամ վերանորոգման աշխատանքների համար

- շենքերի, շինությունների քանդման թույլտվության համար

- ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվության համար

- արտաքին գովազդ տեղադրելու համար

- համայնքի արխիվի փաստաթղթերի պատճեններ/կրկնօրինակներ ստանալու համար

- օրենքով սահմանված այլ դեպքերում:

Տեղական տուրքի դրույքաչափերը

Օրենքում նշվում են այն սահմանները, որում համայնքի ավագանին ղեկավարի ներկայացմամբ սահմանում է տեղական տուրքի բոլորի համար միասնական դրույքաչափերը՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ:

Տեղական վճարներ

Սահմանում. տեղական վճարը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացմամբ պայմանավորված գործողությունների համար, նշված օրենքով սահմանված կարգով և չափով, համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

Տեղական վճարների տեսակները.

- համայնքի տարածքում շինարարական կամ վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար

- տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողահատկացման, վարձակալության և այլն, անհրաժեշտ չափագրական և նման այլ ծառայությունների փոխհատուցման վճար

- տեղական մրցույթների և աճուրդների կազմակերպման ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար:

Տեղական վճարների դրույքաչափերը

Նույնպես սահմանում է համայնքի ավագանին, ղեկավարի ներկայացմամբ՝ տվյալ գործողությունն իրականացնելու համար նվազագույն ծախսերի չափով: Ինչպես և տեղական տուրքերը, տեղական վճարները չեն կարող փոփոխվել տվյալ տարվա ընթացքում:

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ

«Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» 1997թ. ՀՀ օրենքը սահմանում է պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հասկացությունը, հավաքագրման իրավական, ֆինանսական և կազմակերպական հիմունքները, դրույքաչափերը և վճարման կարգը:

Սահմանում. պարտադիր սոցիալական ապահովագրության պետական վճարները սոցիալական ապահովագրության ծրագրերի ֆինանսավորման նպատակով ապահովագրողների կողմից պարտադիր կարգով վճարվող միջոցներ են:

Հայաստանում ՊՍԱՎ կատարվում են իրավաբանական և ֆիզիկական հետևյալ անձանց կողմից.

1. գործատուներ
2. վարձու աշխատողներ
3. անհատ ձեռնարկատերեր
4. քաղաքացիաիրավական պայմանագրերի եկամուտներից եկամուտ ստացող ֆիզիկական անձինք
5. գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականատերեր և նրանց միավորմամբ իրավաբանական անձինք:

Բնապահպանական և բնօգտագործման վճարներ

Բնապահպանական և բնօգտագործման վճարները սահմանվում են «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» 1998թ. օրենքով: Վճարողները կարող են լինել թե՛ ֆիզիկական և թե՛ իրավաբանական անձինք:

Բնապահպանական վճարը

Սահմանում. Բնապահպանական վճարը բնապահպանական միջոցառումների իրականացման անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող վճարն է:

ԲԴՎ տեսակները.

- վնասակար նյութերի շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու համար
- արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու համար
- շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար:

ԲԴՎ դրույքաչափերը.

Սահմանվում են «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» 2000թ. ՀՀ օրենքով:

Բնօգտագործման վճարը

Սահմանում. Բնօգտագործման վճարը պետական սեփականություն հանդիսացող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև տարբեր որակի բնական պաշարներ օգտագործողների համար տնտեսավարման հավասար պայմաններ ստեղծելու նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց պետական բյուջե վճարվող վճարն է:

Բնօգտագործման վճարների տեսակները.

- ջրօգտագործման համար
- պինդ օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանման պաշարների համար
- կենսապաշարների օգտագործման համար (օրինակ, ձկնորսություն):

Բնօգտագործման վճարների դրույքաչափերը

Բնօգտագործման վճարների դրույքաչափերը սահմանվում են ՀՀ կառավարության կողմից:

Ճանապարհային վճարներ

Ճանապարհային վճարների հասկացությունը, վճարողների շրջանակը, վճարի տեսակները, դրույքաչափերը, հաշվարկման և գանձման կարգը սահմանում է «Ճանապարհային վճարի մասին» 1998թ. ՀՀ օրենքը:

Սահմանում. Ճանապարհային վճարը ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով, սահմանված կարգով և չափով, պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է:

Ճանապարհային վճարների տեսակները.

- այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցների համար
- ծանրաքարշ ավտոտրանսպորտային միջոցների համար
- մեծ եզրաչափերով ավտոտրանսպորտային միջոցների համար
- ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար:

Ճանապարհային վճարների վճարողները

Ճանապարհային վճարների վճարողներն են տրանսպորտային միջոցների սեփականատերերը կամ համապատասխան ճանապարհներից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Ճանապարհային վճարների դրույքաչափերը

Ճանապարհային վճարների դրույքաչափերը սահմանված են «Ճանապարհային վճարի մասին» 1998թ օրենքով:

Ինքնատուգման հարցեր

1. Տեղական տուրքերի հասկացությունը և տեսակները:
2. Տեղական վճարների հասկացությունը և տեսակները:
3. Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հասկացությունը և վճարողները:
4. Բնապահպանական վճարների հասկացությունը և տեսակները:
5. Բնօգտագործման վճարների հասկացությունը և տեսակները:
6. Ճանապարհային վճարների հասկացությունը և տեսակները:

ՔԼՈՒԽ 10. ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Թեմայի նպատակը՝ ներկայացնել պետական ծախսերի կազմակերպման իրավական կարգավորումը: Մասնավորապես, կներկայացվեն ՀՀ գանձապետական համակարգի կազմը և կառուցվածքը, խնդիրները ինչպես նաև գործունեության կարգը և սկզբունքները:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողները կկարողանան

- ներկայացնել պետական ծախսերի կազմակերպման իրավական մեխանիզմը
- մեկնաբանել ՀՀ գանձապետական համակարգի կազմը և կառուցվածքը, խնդիրները, ինչպես նաև գործունեության կարգը և սկզբունքները:

ՀՀ Գանձապետական համակարգը

Հայաստանում պետական և համայնքային ծախսերի ֆինանսավորման գործի կազմակերպումը դրված է ՀՀ Գանձապետական համակարգի (կամ՝ Գանձապետարան) վրա: Այն սահմանված է 2001թ. հուլիսի 27-ին ընդունված «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքով:

Գանձապետարանի խնդիրներն են.

- ՀՀ և համայնքների դրամական միջոցների կառավարման և ծախսերի ֆինանսավորման գործի կազմակերպումը
- բյուջեների կատարման կազմակերպումը
- դրամական միջոցների մուտքագրման և ծախսերի կատարման կազմակերպումը գանձապետական միասնական հաշվով
- պետական հիմնարկների կողմից կատարվող վճարումների նկատմամբ նախնական հսկողության իրականացումը
- ֆինանսական հոսքերի սպասարկման կազմակերպումը
- արտաբյուջետային ֆոնդերով գործառնությունների հաշվառումը
- արտաքին պետական պարտքի սպասարկումը
- ներքին պետական պարտքի սպասարկումը
- ՀՀ նկատմամբ առաջացած պարտավորությունների սպասարկումը
- արտասահմանյան վարկերի և դրամաշնորհների հետ կապված գործառնությունների համակարգումը, հսկումը և այլն:

Գանձապետարանի կառուցվածքը

Գանձապետարանը գտնվում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կազմում և գործում է վերջինիս անունից, բաղկացած է Գլխավոր Գանձապետից (ի պաշտոնե՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ), Կենտրոնական գանձապետարանից և տեղական գանձապետական բաժանմունքներից:

Պետական և տեղական մարմինների Գլխավոր ֆինանսիստը

Գանձապետարանի խնդիրների իրականացումն ապահովելու նպատակով, համաձայն օրենքի, յուրաքանչյուր պետական և տեղական ինքնակառավարման մարմին պետք է ունենա Գլխավոր ֆինանսիստ, որը ղեկավարում է այդ մարմնի ֆինանսական և հաշվապահական ծառայությունները: Այդ ծառայությունների կառուցվածքն ու խնդիրները սահմանվում են ՀՀ ֆինանսների նախարարության համաձայնությամբ:

Գանձապետարանի միասնական հաշիվը

Իր լիազորություններն արդյունավետ իրականացնելու համար, օրենքի պահանջով, Կենտրոնական Գանձապետարանի անվամբ ՀՀ կենտրոնական բանկում բացվում և վարվում է Ֆինանսների նախարարության գանձապետական միասնական հաշիվը: Այդ հաշիվն են հաշվեգրվում ՀՀ-ին և համայնքներին ամրագրված բոլոր միջոցները: ՀՀ և համայնքների կողմից բոլոր վճարումներն իրականացվում են գանձապետական միասնական հաշիվից Ֆինանսների նախարարության կողմից սահմանված կարգով:

Ընդ որում, ըստ օրենքի, ՀՀ պետական հիմնարկները չեն կարող ունենալ բանկային հաշիվներ առևտրային բանկերում:

Գանձապետական միասնական հաշիվը ներառում է.

- Ֆինանսների նախարարության կողմից վարվող հետևյալ ենթահաշիվները.
 - ա. ՀՀ պետբյուջեի միջոցները
 - բ. արտասահմանյան վարկերի և դրամաշնորհների միջոցները
 - գ. պետական մարմինների կողմից վարվող ավանդային հաշիվները:
 - Կենտրոնական գանձապետարանի կողմից վարվող հետևյալ ենթահաշիվները (այստեղ միջոցները տնօրինվում են կառավարման մարմինների կողմից).
 - ա. արտաբյուջետային միջոցները
 - բ. համայնքների միջոցները
 - գ. սոցապ պետական հիմնադրամի միջոցները
 - դ. պետական մարմինների այլ ավանդային միջոցները:
- Այս ամենը վերաբերում էր դրամով արտայտված հաշիվին: Համապատասխանաբար բացվում և վարվում են նաև Կենտրոնական գանձապետարանի անվամբ Ֆինանսների նախարարության գանձապետական արտարժույթային հաշիվները:

Նախահաշվային ֆինանսավորման սկզբունքը

Պետական ծախսերը կատարվում են նախահաշվային բյուջետային ֆինանսավորման սկզբունքով: Այս սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ պետական և համայնքային հիմնարկները իրենց գործառնական ծախսերը ծածկում են բյուջեի հաշվին՝ ֆինանսական ծրագրերի ծախսերի նախահաշիվների հիման վրա:

Նախահաշվաբյուջետային ֆինանսավորումը դրամական միջոցների անվերադարձելի և անհատույց հատկացումն է բյուջեի հիման վրա: Դրամական միջոցների գումարները, որոնք հաստատվում են նախահաշվով, կոչվում են *բյուջետային հատկացումներ*:

Նախահաշիվը ֆինանսաժողովրդային ակտ է, որը սահմանում է ծախսերը ծածկելու բյուջետային հատկացումների նպատակային ուղղվածությունը և եռամսյակային բաշխումը:

Բյուջեից ֆինանսավորվող ծախսերի նախահաշիվները ֆինանսավորվում են Ֆինանսների նախարարության կողմից սահմանված ձևերին համապատասխան: Բյուջեների միջոցների ծախսումը, առանց սահմանված կարգով հաստատված նախահաշվի, չի թույլատրվում:

Նախահաշիվների տեսակներն են.

- անհատական (բյուջետային դասակարգման հիման վրա)
- կենտրոնացված միջոցառումների համար (ծախսերի հաշվառմամբ և հիմնավորմամբ խորհրդակցություններ, կոնֆերանսներ և այլն)
- ամփոփիչ (բոլոր անհատական և կենտրոնացված միջոցառումների նախահաշիվները, որ ներառում են տվյալ հիմնարկի բոլոր բյուջետային ծախսերը):

Ծախսերը բաժանվում են երկու հիմնական մասի.

1. կապիտալ ներդրումներ
2. ընթացիկ ծախսեր, որոնք բաժանվում են՝ վարչական և գործառնությունների ծախսերի:

Ծախսերը կատարվում են ըստ Ֆինանսների նախարարության կողմից սահմանված նորմատիվների:

Այդ նորմատիվների տեսակներն են.

ըստ բնույթի՝

ա. նյութական և

բ. դրամային

ըստ հաշվարկման ձևի՝

ա. պարտադիր (օրինակ, աշխատավարձի դրույթ) և

բ. հաշվարկային (օրինակ, միավորի միջին ծախս):

Ինքնաստուգման հարցեր

1. ՀՀ Գանձապետարանի կառուցվածքը և խնդիրները:
2. ՀՀ Գանձապետարանի միասնական հաշվի դերը և կառուցվածքը:
3. Նախահաշվային ֆինանսավորման սկզբունքի էությունը և նախահաշիվների տեսակները:

ԳԼՈՒԽ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Թեմայի նպատակը՝ պարզաբանել ապահովագրության տնտեսական, համակարգային և իրավական բնույթը և հիմնական գործառնությունները, ապահովագրության առանձնահատկությունները: Կուսուճանասիրվեն նաև Հայաստանում ապահովագրության իրավական կարգավորման և ապահովագրության դասակարգման և համակարգի հարցերը:

Ուսանողներին և հմտությունների նկարագրիր: Թեմայի ավարտից հետո ուսանողները կկարողանան

- ներկայացնել ապահովագրության տնտեսական, համակարգային և իրավական բնույթը և հիմնական գործառնությունները
- մեկնաբանել Հայաստանում ապահովագրության իրավական կարգավորման և ապահովագրության դասակարգման և համակարգի հարցերը:

Ապահովագրության հասկացությունը և էությունը

Ապահովագրության գոյությունը կապված է բնական և սոցիալական բնույթի տարբեր անբարենպաստ ուժերի/հետևանքների հետ, որոնք առաջացնում են տարբեր ռիսկեր: Այստեղ ռիսկերը հանկարծակի և չնախատեսված բացասական հետևանքներն են: Նմանատիպ հետևանքները վերացնելու կամ փոխհատուցելու նպատակով ստեղծվում են ապահովագրական հիմնադրամներ:

Ապահովագրությունը ֆինանսական համակարգի ինքնուրույն տարր է և բաժանվում է երկու հիմնական ուղղությունների՝ սոցիալական և արտակարգ երևույթների, կապված իրավիճակների ապահովագրության հետ:

Տնտեսագիտական առումով ապահովագրական հարաբերությունները տնտեսական հարաբերություններ են՝ կապված ֆինանսական միջոցների պահուստների կազմավորման հետ, որոնք անհրաժեշտ են անձնական և հասարակական չկանխատեսված կարիքների բավարարման համար:

Համակարգային առումով ապահովագրությունը նախատեսում է համապատասխան մասնագիտացված անձանց և հիմնադրամների գոյությունը և գործունեությունը:

Իրավական առումով ապահովագրությունը օրենքով և / կամ պայմանագրով սահմանված պայմաններով ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և անձնական շահերի պաշտպանության հարաբերություններն են: Որոշակի դեպքերի (ապահովագրական դեպքեր) տեղի ունենալու պայմաններում ապահովագրական սուբյեկտների կողմից վճարվող ապահովագրական ֆոնդերի հաշվին կատարվում են հատուցումներ:

Ապահովագրությունը, որպես ֆինանսական համակարգի ինքնուրույն օղակ, որոշակի յուրահատկություններով կատարում է ֆինանսներին վերաբերող բոլոր հիմնական գործառնությունները:

Դրանք են.

- նախագուշակական (ժամանակավոր ազատ միջոցները կարող են ներդրվել համապատասխան վտանգների նվազեցնելու ուղղությամբ)
- վերականգնիչ (ապահովագրական դեպքի փոխհատուցման դեպքում)
- խնայողական (ներդրված ապահովագրական միջոցների)
- վերահսկողական (միջոցները կուտակվում և օգտագործվում են որոշակիորեն վերահսկվող կարգով):

Ապահովագրության առանձնահատկություններն են.

- *հավանական բնույթը.* անհնար է կանխատեսել ապահովագրական դեպքի ժամանակը և կրած վնասները, ինչպես նաև կոնկրետ ապահովագրվողին
- *վերադարձելիությունը.* վճարված գումարները վերջին հաշվով վերադարձվում են ապահովագրվողներին (սակայն այստեղ վճարումների և ստացումների միջև հնարավոր են անհամապատասխանություններ՝ կապված դեպքերից և գործարքի պայմաններից)
- *նպատակային օգտագործումը.* միջոցներն օգտագործվում են միայն սահմանված դեպքերում և պայմաններով:

ՀՀ-ում ապահովագրության իրավական կարգավորումը

Հայաստանում ապահովագրական իրավական կարգավորման հիմքերը սահմանված են է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (հոդվ. 983-1025) և «Ապահովագրության մասին» 1996թ. դեկտեմբերի 16-ի ՀՀ օրենքով:

Համաձայն ՀՀ Քաղօրենսգրքի 985 հոդվածի. «գույքային ապահովագրության պայմանագրով՝ մի կողմը (*ապահովագրողը*) պարտավորվում է պայմանագրով պայմանավորված վճարի (*ապահովագրական պարգևի*) դիմաց, պայմանագրով նախատեսված դեպքը (*ապահովագրական դեպքը*) վրա հասնելիս, մյուս կողմին (*ապահովագրվողին*) կամ այլ անձի, ում օգտին կնքվել է պայմանագիրը (*շահառուին*) հատուցել ապահովագրված գույքին այդ դեպքի հետևանքով պատճառված կամ ապահովագրվողի այլ գույքային շահերի հետ կապված վնասները (*ապահովագրական հատուցումը*)՝ պայմանագրով որոշված գումարի (*ապահովագրական գումարի*) սահմաններում»: Նմանատիպ են նաև անձնական և այլ ապահովագրության պայմանագրերը:

Ապահովագրության դասակարգումը

Ապահովագրությունը դասակարգվում է ըստ հետևյալ սկզբունքների՝

Ըստ կամավորության սկզբունքի.

ա. կամավոր (օրենքով և պայմանագրով)

բ. պարտադիր (օրենքով սահմանված դեպքերում):

Ըստ օբյեկտի, ապահովագրությունը կարող է լինել.

ա. գույքի

բ. անձնական

գ. պատասխանատվության:

Ապահովագրական գործունեության կազմակերպումը

Հայաստանում Ապահովագրական գործունեությունն իրականացվում է լիցենզավորված անձանց կողմից: Ապահովագրող կազմակերպություններն ապահովագրական գործունեություն կարող են իրականացնել ապահովագրական գործակալների և բրոքերների միջոցով:

Ապահովագրական գործակալները հանդես են գալիս ապահովագրական կազմակերպությունների անունից և հանձնարարությամբ:

Ապահովագրական բրոքերները միջնորդ լիցենզավորված կազմակերպություններ/անհատ ձեռներեցներ են, որ հանդես են գալիս ապահովագրվողի անունից և հանձնարարությամբ:

Հայաստանում ապահովագրական ոլորտը կարգավորվում/լիցենզավորվում և վերահսկվում է ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից:

Ըստ օրենքի, Հայաստանում ապահովագրական ռիսկերը պետք է տեղաբաշխվեն ՀՀ-ում լիցենզավորված ապահովագրական ընկերություններում: Վերջիններս, իրենց հերթին, այս ռիսկերը իրավունք ունեն վերաապահովագրելու նաև օտարերկրյա ապահովագրական ընկերություններում:

Ապահովագրողները իրենց պարտավորություններն ապահովելու նպատակով ստեղծում են պահուստներ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով: Նրանք, իրենց տրամադրության տակ մնացած այլ միջոցների, ինչպես նաև ապահովագրական պահուստների հաշվին կարող են կատարել ներդրումներ կամ դրանք տեղաբաշխել այլ ձևով՝ պայմանագրերում նշված ապահովագրական գումարների սահմաններում: Ընդ որում, պահուստների 50 տոկոսից ոչ պակաս մասը պարտավոր են տեղաբաշխել ՀՀ կառավարության առավել հուսալի ներդրումներում:

ՀՀ կառավարությունը սահմանում է նաև ապահովագրական ընկերությունների ակտիվների և պարտավորությունների միջև նորմատիվային հարաբերակցությունը: Այդ նորմատիվները գերազանցող միջոցները ենթակա են վերաապահովագրման:

Ինքնաստուգման հարցեր

1. Ապահովագրության հասկացությունը:
2. Ապահովագրության հիմնական գործառույթները:
3. Ապահովագրության առանձնահատկությունները և տեսակները:
4. Ապահովագրական գործունեության կարգավորումը և համակարգը:

ՎՈՒԽ 12. ԱՐԺԵՐՈՒԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Թեմայի նպատակը՝ ներկայացնել արժեթղթերի շուկայի դերը երկրի ֆինանսական ոլորտում: Կուսուճանասիրվեն արժեթղթերի շուկայի իրավական կարգավորման հարցերը, մասնավորապես՝ թե ինչ՞ է իրենից ներկայացնում արժեթղթերի շուկան, ո՞րն է արժեթղթերի շուկայի օրենքով կարգավորման նպատակը, որո՞նք են արժեթղթերի շուկայի մասնակիցները և, հատկապես, որո՞նք են ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի հիմնական խնդիրները:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողները կկարողանան

- պատկերացնել արժեթղթերի շուկայի դերը երկրի ֆինանսական ոլորտում
- կողմնորոշվել արժեթղթերի շուկայի իրավական կարգավորման հարցերում:

Հայաստանի արժեթղթերի շուկան

Արժեթղթերի շուկան կարևոր դեր ունի յուրաքանչյուր երկրի ֆինանսական ոլորտում: Արժեթղթերի և դրանց տեսակների հասկացությունը տրվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 146-161 հոդվածներով և «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» 2000թ. հուլիսի 6-ի ՀՀ օրենքով: Նշված օրենքը կարգավորում է ՀՀ արժեթղթերի շուկայում ծագող հարաբերությունները:

Արժեթղթերի շուկան արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման և հրապարակային առուվաճառքի առնչությամբ առաջացող փոխհարաբերությունների համակարգն է: Արժեթղթերի շուկան ներառում է ՀՀ տարածքում գործող ֆոնդային բորսաները, արժեթղթի արտաբորսայական առևտրի ոլորտը և մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց:

Արժեթղթերի շուկայի օրենքով կարգավորման նպատակն է.

- ա. ներդրողների պաշտպանությունը
- բ. արժեթղթերի շուկայի մասնակիցների գործունեության թափանցիկության ապահովումը
- գ. արժեթղթերի շուկայի, արժեթղթերով գործարքների վճարահաշվարկային համակարգի արդյունավետ գործունեության ապահովումը, կատարելագործումն ու զարգացումը
- դ. արժեթղթերի արժանահավատ գնագոյացման համակարգի ձևավորումը և պահպանումը
- ե. արժեթղթերի և դրանցով իրականացվող գործարքների համար նախատեսված դրամական միջոցների օգտագործման և վարկային համակարգի անվտանգությունը:

Արժեթղթերի շուկայի մասնակիցներն են.

1. արժեթղթերի թողարկողները
2. մասնագիտացված գործունեություն իրականացնող անձինք
3. ինքնակարգավորվող կազմակերպությունները
4. ՀՀ արժեթղթերի հանձնաժողովը:

Արժեթղթերի թողարկողները

Արժեթուղթ թողարկելը (եմիսիան) **թողարկողի** կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն արժեթուղթն առաջին ներդրողին վաճառելն է: Թողարկողն այն անձն է, որն արժեթուղթ է թողարկում կամ, որն արժեթուղթ թողարկելու առաջարկություն է անում: Օրենքը սահմանում է այն պայմանները, որի դեպքում թողարկողը համարվում է **հաշվետու թողարկող**: Թողարկելուն հետևում է արժեթղթի **հրապարակային կամ փակ տեղաբաշխումը**:

Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձինք

Մասնագիտացված գործունեություն իրականացնող անձինք են **բրոքերային (դիլերային) ընկերությունները, արժեթղթերի հավատարմագրային կառավարիչները, արժեթղթերի պահառուները (Կենտրոնական դեպոզիտարիան և այլն) և օրենքով սահմանված այլ անձինք**: Արժեթղթերի շուկայի մասնագիտացված գործունեությունն այն գործունեությունն է, որը ենթակա է լիցենզավորման Հանձնաժողովի կողմից օրենքին համապատասխան:

Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձինք

Ինքնակարգավորվող կազմակերպությունները արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց կամավոր միավորումներն են, որոնք հանդես են գալիս ոչ առևտրային իրավաբանական անձի տեսքով և գրանցվում Հանձնաժողովում: Նպատակն է իր անդամների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, նրանց գործունեության կարգավորումն ու վերահսկողությունը, հավաքական շահերի պաշտպանությունը, վարքագծի, էթիկայի կանոնների մշակումն ու կիրառումը և այլն: Ինքնակարգավորվող կազմակերպությունը պետք է ունենա առնվազն 10 անդամ: Այսպիսի կազմակերպություններ են համարվում ֆոնդային բորսաները, Կենտրոնական դեպոզիտարիան:

Ֆոնդային բորսա

է համարվում այն ինքնակարգավորվող կազմակերպությունը, որը որոշակի տեղում սահմանված կարգով կազմակերպում է արժեթղթերով հրապարակային առևտուր և արժեթղթերի գնանշում: Ֆոնդային բորսայի անդամ կարող են դառնալ միայն բրոքերային (դիլերային) ընկերությունները:

Կենտրոնական դեպոզիտարիան ինքնակարգավորվող կազմակերպություն է, որն իրականացնում է կենտրոնացված պահառուի, արժեթղթերի ռեեստրի, ինչպես նաև հաշվանցման (քլիրինգի) և վերջնահաշվարկի գործառնությունները: Կենտրոնական դեպոզիտարիայի անդամ կարող են լինել ֆոնդային բորսան, մասնագիտացված անձինք, բանկերը:

ՀՀ արժեթղթերի հանձնաժողովը

Հանձնաժողովը ստեղծվել է արժեթղթերի կարգավորման մասին վերոհիշյալ օրենքով: Այն պետական մարմին է, որը գործում է օրենքի և դրան համապատասխան այլ իրավական ակտերի հիման վրա և օժտված է օրենքով սահմանված պետական կարգավորման իրավասությամբ: Իր իրավասության շրջանակներում Հանձնաժողովը անկախ է պետական և այլ մարմիններից:

ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի *խնդիրներն են՝* ապահովել.

ա. արժեթղթերում ներդրողների պաշտպանությունը

բ. շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորումն ու պահպանումը

գ. արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ պայմանները:

Իր խնդիրներն իրականացնելու նպատակով Հանձնաժողովը՝ օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակներում, կարգավորում և վերահսկում է ՀՀ-ում արժեթղթերով կատարվող գործարքների շուկան և դրա մասնակիցներին և օրենքով սահմանված դեպքերում ու կարգով նրանց նկատմամբ կարող է կիրառել տույժեր:

Հանձնաժողովը վերահսկում է մասնագիտացված անձանց, նրանց տնօրեններին և այլ ղեկավարներին, նրանց կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց, թողարկողներին, նրանց խոշոր բաժնետերերին, տնօրեններին և այլ ղեկավարների, ինչպես նաև արժեթղթերի շուկայում կատարվող խոշոր գործարքները, խոշոր գործարքներում ուղղակիորեն և անուղղակիորեն ներգրավված անձանց: Այդ իրավասությունն Հանձնաժողովն իրականացնում է հաշվետվական վերահսկողության և ստուգումների միջոցով:

Հանձնաժողովը իրավասու է կիրառել հետևյալ տույժերը՝ նախագգուշացում և խախտումները շտկելու կամ հետագայում բացառելու կարգադրություն, տուգանք, լիցենզիայի կասեցում, լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում:

Ինքնաստուգման հարցեր

1. Արժեթղթերի շուկայի հասկացությունը և դերը:
2. Արժեթղթերի շուկայի օրենքով կարգավորման նպատակը:
3. Արժեթղթերի շուկայի մասնակիցները:
4. Արժեթղթերի շուկայի ինքնակարգավորվող կազմակերպությունները և դրանց նպատակը:
5. ՀՀ արժեթղթերի հանձնաժողովը և դրա հիմնական խնդիրները:

ԳԼՈՒԽ 13. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Թեմայի նպատակը՝ ներկայացնել ներդրումների իրավական կարգավորման հիմունքները: Մասնավորապես՝ տեղական և օտարերկրյա ներդրողները, օտարերկրյա ներդրումների տեսակները և իրականացման ձևերը: Կքննարկվեն նաև օտարերկրյա ներդրումների համար օրենքով սահմանված արտոնությունները և երաշխիքները և դրանց նպատակը:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողները կկարողանան

- ներկայացնել ներդրումների իրավական կարգավորման հիմունքները
- տարանջատել տեղական և օտարերկրյա ներդրումները
- բնութագրել օտարերկրյա ներդրումների տեսակները և իրականացման ձևերը
- բնորոշել օտարերկրյա ներդրումների համար օրենքով սահմանված արտոնությունները և երաշխիքները, դրանց նպատակը:

Ներդրումների հասկացությունը

Երկրի ֆինանսատնտեսական զարգացման գործում կարևոր դեր ունեն տնտեսության մեջ իրականացվող ներդրումները: Ներդրումային գործունեություն է համարվում ներդրող անձի կողմից գույքի ցանկացած տեսակի, այդ թվում՝ ֆինանսական միջոցների և մտավոր արժեքների անմիջական ներդրումը ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում շահույթի (եկամտի) ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու համար:

Ներդրումները կարող են լինել ամենաբազմազան ձևերի և տեսակների՝ սկսած սովորական ներդրումային գործարքից (օրինակ՝ բաժնետոմսի կամ գործող առևտրային օբյեկտի ձեռքբերում) և վերջացած ներդրումային խոշոր ծրագրերի ֆինանսավորմամբ և մասնագիտացված ներդրումային գործունեությամբ (օրինակ, լիզինգային գործունեություն): Հայաստանում ներդրումային գործունեությունը կարգավորվում է Քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև համապատասխան այլ օրենքներով:

Ներդրողները կարող են լինել տեղական կամ օտարերկրյա:

Տեղական ներդրողները Հայաստանի քաղաքացիները կամ ռեզիդենտներն են, որոնք օրենքով չարգելված ամենատարբեր ձևերով իրականացնում են ներդրումներ Հայաստանում:

Օտարերկրյա ներդրումները

Տեղական և օտարերկրյա ներդրումներն իրենց ընդհանուր բնույթով, ձևերով և տեսակներով ու կարգավորմամբ զրեթե նույնն են: Սակայն Հայաստանում, ինչպես շատ երկրներում, օրենքը տարբերակում և խրախուսում է օտարերկրյա ներդրումները:

Օտարերկրյա ներդրողը

Համաձայն «Օտարերկրյա ներդրումների մասին» 1994թ. հուլիսի 31-ի ՀՀ օրենքի «օտարերկրյա ներդրող է համարվում օտարերկրյա պետություն, ցանկացած օտարերկրյա իրավաբանական անձ, օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ, ՀՀ տարածքից դուրս մշտապես բնակվող ՀՀ քաղաքացի, ինչպես նաև միջազգային կազմակերպություն, որն իր գտնվելու վայրի օրենսդրությանը համապատասխան ներդրում է կատարում Հայաստանի Հանրապետությունում»:

Օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություն է համարվում ՀՀ օրենսդրությանը համապատասխան ստեղծված ցանկացած կազմակերպական – իրավական տեսակի ձեռնարկություն, որի հիմնադիրը կամ մասնակիցն օտարերկրյա ներդրող է:

Օտարերկրյա ներդրումների տեսակներն են.

- ա. արտարժույթով, արժույթային այլ արժեքներով, ՀՀ ազգային դրամով
- բ. շարժական ու անշարժ գույքով և դրա հետ կապված գույքային ցանկացած իրավունքով
- գ. բաժնետոմսերով, պարտատոմսերով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ արժեթղթերով
- դ. դրամական պահանջների ձևով և պայմանագրային արժեք ունեցող պարտավորությունների կատարման պահանջի իրավունքով
- ե. արժեք ունեցող մտավոր սեփականության ցանկացած իրավունքով
- զ. ՀՀ օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված տնտեսական գործունեության իրականացման իրավունքով, այդ թվում նաև բնական ռեսուրսների հետախուզման, արդյունահանման, մշակման կամ շահագործման իրավունքով

է. վճարովի ծառայություններով

ը. ՀՀ օրենսդրությամբ չարգելված ներդրումների ցանկացած տեսակներով:

Օտարերկրյա ներդրումների իրականացման ձևերն են.

ա. օտարերկրյա ներդրողներին ամբողջությամբ պատկանող ձեռնարկությունների, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական անձանց պատկանող բաժանմունքներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ստեղծելու կամ գործող ձեռնարկությունները որպես սեփականություն ձեռք բերելու միջոցով

բ. ՀՀ իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կամ ՀՀ քաղաքացիների մասնակցությամբ նոր ձեռնարկություններ հիմնադրելու կամ գործող ձեռնարկություններում բաժնեմաս ձեռք բերելու միջոցով

գ. ՀՀ օրենսդրության շրջանակներում բաժնետոմսեր, պարտատոմսեր և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ արժեթղթեր ձեռք բերելու միջոցով

դ. ինքնուրույն կամ ՀՀ իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների մասնակցությամբ հողօգտագործման իրավունք և ՀՀ տարածքում բնական ռեսուրսների օգտագործման կոնցեսիաներ ձեռք բերելու միջոցով

ե. գույքային այլ իրավունքների ձեռքբերման միջոցով

զ. ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով, մասնավորապես՝ ՀՀ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

Օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ իրավական պայմանները

Օտարերկրյա ներդրումները խրախուսելու նպատակով օրենքը արտոնություններ և երաշխիքներ է սահմանում օտարերկրյա ներդրումների հետ կապված տարբեր հարցերում: Մասնավորապես, գործում են արտոնություններ և երաշխիքներ հարկային, մաքսային, արժույթային, արտահանման և ներմուծման, իրավական, մտավոր սեփականության պաշտպանության և այլ ոլորտներում:

Օտարերկրյա ներդրումների և դրանց հետ կապված իրավական ռեժիմը ՀՀ-ում չի կարող նվազ բարենպաստ լինել, քան ՀՀ քաղաքացիների, կազմակերպությունների, հիմնարկների գույքի, գույքային իրավունքների և ներդրման գործունեության ռեժիմում:

Ավելին, սոցիալական և տնտեսական զարգացման կարևորագույն բնագավառներում, ինչպես նաև վերը նշված հարցերում օտարերկրյա ներդրումների խրախուսման նպատակով կարող են սահմանվել լրացուցիչ արտոնություններ և երաշխիքներ:

Օտարերկրյա ներդրումների մասին օրենքը սահմանում է հետևյալ տիպի հատուկ *երաշխիքներ*.

- օրենքի փոփոխման դեպքում (այդ դեպքում 5 տարի գործում է հին օրենքը)
- ազգայնացումից և բռնազանձումներից և դրանց փոխհատուցման համար
- վնասի փոխհատուցման համար
- շահույթի (եկամտի) և այլ միջոցների ազատ տնօրինման համար
- սեփականության, շահույթի (եկամտի) և այլ միջոցների ազատ արտահանման:

Ինքնաստուգման հարցեր

1. Ներդրումային գործունեության հասկացությունը և կարգավորումը:
2. Օտարերկրյա ներդրողի հասկացությունը:
3. Օտարերկրյա ներդրումների տեսակները և իրականացման ձևերը:
4. Օտարերկրյա ներդրումների արտոնությունները և երաշխիքները:

ԳԼՈՒԽ 14. ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Թեմայի նպատակը՝ ներկայացնել դրամաշրջանառության իրավական կարգավորման հիմունքները, ՀՀ կենտրոնական բանկի դերը դրամաշրջանառության կազմակերպման և դրամավարկային քաղաքականության մշակման գործում:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողները կկարողանան

- ներկայացնել դրամաշրջանառության իրավական կարգավորման հիմունքները
- մեկնաբանել ՀՀ կենտրոնական բանկի դերը դրամաշրջանառության կազմակերպման և դրամավարկային քաղաքականության մշակման գործում:

Դրամաշրջանառության հասկացությունը

Դրամաշրջանառությունը կատարվում է անկանխիկ հաշվարկների և կանխիկ շրջանառության ձևով: Անկանխիկ շրջանառության ոլորտից դրամը շարունակ անցնում է կանխիկ շրջանառության մեջ և ընդհակառակը: Շրջանառվող դրամի քանակը կախված է երեք գործոններից.

- ա. ապրանքային զանգվածի ծավալներից
- բ. ապրանքների գների ամբողջականությունից
- գ. դրամի շրջանառության այն արագությունից, որ նրան հաղորդում է ապրանքների շարժումը:

Դրամի քանակը հավասար է ապրանքների գների գումարին՝ բաժանած համանուն դրամական միավորների կատարած պտույտների թվի վրա:

Այնպիսի Հայաստանի դրամաշրջանառության պատմությունից, իսՄՀՄ փլուզմանը հաջորդած նորանկյախ մի շարք երկրների կողմից ընդհանուր դրամի (ռուբլու) գոտի ստեղծելու որոշակի անհաջող փորձերից հետո 1993թ. ՀՀ Գերագույն խորհուրդը ստեղծեց ՀՀ դրամաշրջանառության պետական հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում էին ՀՀ ԳԽ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը, ՀՀ ֆինանսների նախագահը և Կենտրոնական բանկի նախագահը: Այդ Հանձնաժողովն ընդունեց 1993թ. նոյեմբերին ՀՀ-ում ազգային դրամը (դրամ և լումա) շրջանառության մեջ դնելու մասին որոշումը, որն ուժի մեջ մտավ 1993թ. դեկտեմբերի 1-ից: Համաձայն այդ որոշման, խորհրդային ռուբլին 1:200 դրամ/ռուբլի հարաբերակցությամբ փոխարինվեց դրամով: Այդպես դրամը դարձավ Հայաստանի վճարման միակ օրինական միջոցը:

Դրամաշրջանառության իրավական կարգավորումը.

Դրամաշրջանառության իրավական կարգավորման գլխավոր խնդիրը կայանում է բնակչության դրամական եկամուտների և ներքին շուկայում առաջարկվող ապրանքների ու վճարովի ծառայությունների արժեքի միջև օպտիմալ հարաբերակցության պահպանումը:

Հայաստանում դրամաշրջանառության կարգավորմանը մասնակցում են հետևյալ պետական մարմինները.

- ՀՀ Ազգային ժողովը՝ ընդունում է օրենսդրական ակտեր, որոնք կարգավորում են դրամավարկային հարաբերությունները
- ՀՀ կառավարությունը՝ ապահովում է ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականության իրականացումը
- ՀՀ կենտրոնական բանկը՝ կազմակերպում և կարգավորում է դրամաշրջանառությունը:

ՀՀ կենտրոնական բանկը և դրամաշրջանառությունը

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» 1996թ. հունիսի 30-ի ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ կենտրոնական բանկը թողարկում է ՀՀ արժույթը, կազմակերպում և կարգավորում է դրամաշրջանառությունը: ՀՀ կենտրոնական բանկը հանրապետության միակ էմիսիոն բանկն է: Նրա բացառիկ իրավասությունն է ՀՀ տարածքում օրինական վճարամիջոց հանդիսացող թղթադրամ և մետաղադրամ թողարկելը և շրջանառությունից հանելը: ՀՀ ԿԲ-ն իրականացնում է նաև անկանխիկ էմիսիայի կարգավորումը:

Դրամաշրջանառությունը կազմակերպելիս, ՀՀ կենտրոնական բանկը.

1. Որոշում է հանրապետության տնտեսության մեջ դրամարկղային գործողություններ կատարելու կարգը:
2. Կազմակերպում է թղթադրամի և մետաղադրամի թողարկումը:
3. Սահմանում է կանխիկ դրամի պահպանման, տեղափոխման և ինկասացիայի կարգը:
4. Ապահովում է թղթադրամի ու մետաղադրամի պահուստային ֆոնդերի ստեղծումը:
5. Սահմանում է դրամի վճարունակության հատկանիշները, փոխանակման և ոչնչացման կարգը:

Դրամավարկային քաղաքականությունը

Յուրաքանչյուր տարի պետական բյուջեն հաստատելուց հետո 10 օրվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը ներկայացնում և հրապարակում է առաջիկա տարվա դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունները՝ հիմնված ՀՀ պետական բյուջեի նախորդ հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունքների վերլուծության վրա:

Դրամավարկային քաղաքականությունը ներառում է.

1. տնտեսական իրավիճակի վերլուծությունը և կանխատեսումը՝ կապված ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման և պետական բյուջեի ցուցանիշների հետ
2. շրջանառության մեջ գտնվող դրամական զանգվածի և վարկային ներդրումների սահմանաքանակը
3. տոկոսադրույքների մակարդակը
4. դրամավարկային կարգավորման մեթոդները
5. օրենքով սահմանված խնդիրների իրականացման համար ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված դրույքները:

Ինքնաստուգման հարցեր

1. Դրամաշրջանառության իրավական կարգավորման գլխավոր խնդիրը:
2. Դրամաշրջանառության կարգավորման պետական մարմինները:
3. ՀՀ կենտրոնական բանկի դերը դրամաշրջանառության կարգավորման գործում:
4. ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականությունը և դրա բաղկացուցիչ մասերը:

ԳԼՈՒԽ 15. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՆՈՒՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Թեմայի նպատակը՝ ներկայացնել արժութային գործառնությունների իրավական կարգավորման հիմունքները, արժութային գործառնությունների հետ կապված հիմնական սահմանումները, արժույթով հաշվարկների և գործառնությունների կարգը: Կներկայացվի նաև ՀՀ Կենտրոնական բանկի դերը արժութային կարգավորման և վերահսկողության գործում, ինչպես նաև արժութային վերահսկողության հիմնական ուղղությունները և իրականացման կարգը:

Ուսնականությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողները կկարողանան

- ներկայացնել արժութային գործառնությունների իրավական կարգավորման հիմունքները
- տալ արժութային գործառնությունների հետ կապված հիմնական սահմանումները, արժույթով հաշվարկների և գործառնությունների կարգը
- ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկի դերը արժութային կարգավորման և վերահսկողության գործում, ինչպես նաև արժութային վերահսկողության հիմնական ուղղությունները և իրականացման կարգը:

Արժութային գործառնությունները Հայաստանում կարգավորվում են 1993թ. սեպտեմբերի 2-ի «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով:

Այս օրենքը սահմանում է ՀՀ-ում արժութային գործառնությունների իրականացման ընդհանուր սկզբունքները, արժութային վերահսկողության մարմինների լիազորությունները, արժութային արժեքների տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը արժութային օրենսդրությունը խախտելու համար:

Օրենքը տալիս է հետևյալ հասկացությունների սահմանումները.

1. ՀՀ արժույթի
2. ՀՀ արժույթով արժեթղթերի
3. արժութային արժեքների
4. արտարժույթի
5. ռեզիդենտների
6. ոչ-ռեզիդենտների
7. արժութային գործառնությունների
8. ընթացիկ արժութային գործառնությունների
9. կապիտալի և վարկի շարժման հետ կապված արժութային գործառնությունների 10. լիազոր բանկերի:

Արժութային կարգավորումը պետական մարմինների գործունեությունն է՝ ուղղված արժութային գործառնությունների կանոնակարգմանը: Արժութային իրավական կարգավորումն իրականացվում է երկու մակարդակով՝ նորմատիվ և անհատական:

Արժութային իրավափարաբերության սուբյեկտներն են իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք իրենց հերթին բաժանվում են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների:

Արժույթով հաշվարկները և գործառնությունները

Ռեզիդենտների միջև հաշվարկները ՀՀ-ի արժույթով իրականացվում են առանց սահմանափակումների: ՀՀ տարածքում ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ արժույթ ձեռք բերելու և օգտագործելու կարգը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը՝ ՀՀ օրենսդրությամբ համապատասխան:

Համաձայն օրենքի, թանկարժեք մետաղների, բնական թանկարժեք քարերի, գեղարվեստական և պատմական արժեք ներկայացնող գործերի և իրերի ներմուծման և արտահանման հետ կապված գործարքների կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Օրենքը նաև սահմանում է ՀՀ-ում արժութային գործառնություններ իրականացնող ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների, ինչպես նաև ՀՀ արժույթով և դրանով արտահանյալ արժեթղթերով գործառնություններ իրականացնող ոչ ռեզիդենտների իրավունքները և պարտավորությունները:

ՀՀ կենտրոնական բանկը և արժութային կարգավորումը

ՀՀ կենտրոնական բանկը արժութային կարգավորման հիմնական մարմինն է:

Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» և «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքների, ՀՀ կենտրոնական բանկը իրավունք ունի.

- ա. սահմանել արժութային գործառնությունների իրականացման կարգը և պայմանները, ընդունել արժութային գործառնությունները կարգավորող որոշումներ և կանոններ
 - բ. հսկել և կարգավորել արժութային գործառնություններ իրականացնող դիլերների, ներառյալ բանկերի գործունեությունը
 - գ. սահմանել արժութային դիլերների, ներառյալ բանկերի արտարժույթի տնօրինման նորմատիվը
 - դ. սահմանել հայկական դրամի փոխարժեքի որոշման մեթոդները:
- ՀՀ կենտրոնական բանկը նաև սահմանում է արտարժութային գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունների ձևերը և դրանց ներկայացնելու կարգը:

Արժութային վերահսկողությունը

Արժութային վերահսկողության նպատակն է ապահովել արժութային օրենսդրության պահպանումը՝ արժութային արժեքներով գործառնություններ իրականացնելիս:

Արժութային վերահսկողության հիմնական ուղղություններն են

ա. գործող օրենսդրությանն արժութային գործառնությունների համապատասխանության և դրանց համար անհրաժեշտ լիցենզիաների առկայության ստուգումը

բ. պետության հանդեպ ռեզիդենտների կողմից արտարժույթով պարտավորությունների, ինչպես նաև ՀՀ ներքին շուկայում արտարժույթի, թանկարժեք մետաղների, բնական թանկարժեք քարերի, գեղարվեստական և պատմական արժեք ներկայացնող արվեստի գործերի և իրերի վաճառքի գծով պարտավորությունների կատարման ստուգումը

գ. արտարժույթով վճարումների օրինականության ստուգումը

դ. արժութային գործառնությունների, ինչպես նաև ՀՀ արժույթով, դրանով արտահայտված արժեթղթերով ոչ ռեզիդենտների հաշվառման և հաշվետվության ամբողջականության ստուգումը:

Արժութային վերահսկողությունն իրականացվում է արժութային վերահսկողության մարմինների և գործակալների միջոցով: Հայաստանում արժութային վերահսկողության մարմիններն են՝ ՀՀ կենտրոնական բանկը, ինչպես նաև ՀՀ կառավարությունը, համաձայն օրենսդրության: Գործակալներն են վերահսկողության մարմինների կողմից օրենսդրությանը համապատասխան լիազորված և վերջիններիս հաշվետու կազմակերպությունները: Լիազոր բանկերը հանդիսանում են գործակալներ:

Օրենքը սահմանում է արժութային օրենսդրության *խախտումները և պատասխանատվությունը* դրանց համար:

Ինքնաստուգման հարցեր

1. Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին օրենքի նպատակը և արժութային կարգավորման հասկացությունը:
2. ՀՀ կենտրոնական բանկի իրավունքները արժութային կարգավորման գործում:
3. Արժութային վերահսկողության իրականացման կարգը:
4. Արժութային վերահսկողության հիմնական ուղղությունները:

ԳԼՈՒԽ 16. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Թեմայի նպատակը՝ ներկայացնել բանկային գործունեության իրավական հիմունքները: Կներկայացվի բանկային համակարգը, կարգաբանվի, թե որոնք են բանկը և բանկային գործունեությունը, ինչպես նաև կտրվի բանկերի դասակարգումը ըստ տեսակների: Կուսումնասիրվեն նաև բանկային գործունեության լիցենզավորման հասկացությունը և կարգը, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի դերը բանկային գործունեության կարգավորման ոլորտում:

Ուսնությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողները կկարողանան

- պատկերացնել բանկային գործունեության իրավական հիմունքները;
- ներկայացնել բանկային համակարգը իրավական տեսանկյունից, մասնավորապես՝ բանկը և բանկային գործունեությունը
- տալ բանկերի դասակարգումն ըստ տեսակների
- հասկանալ բանկային գործունեության լիցենզավորման կարգը, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի դերը բանկային գործունեության կարգավորման ոլորտում:

ՀՀ բանկային համակարգը և իրավական կարգավորումը

ՀՀ բանկային համակարգն ընդգրկում է ՀՀ Կենտրոնական բանկը, ՀՀ տարածքում գործող բանկերը (այդ թվում՝ դուստր բանկերը), նրանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, ինչպես նաև օտարերկրյա բանկերի ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները:

ՀՀ տարածքում գործող բանկերի գործունեությունը կարգավորվում է 1996թ. հունիսի 30-ի «Բանկերի և բանկային գործունեության մասին», «ՀՀ կենտրոնական բանկի մասին», 1996թ. հոկտեմբերի 7-ի «Բանկային գաղտնիքի մասին», 2001թ. նոյեմբերի 6-ի «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» օրենքներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով ու դրանց շրջանակներում ընդունված այլ իրավական ակտերով: ՀՀ տարածքում գործող բանկերի գործունեության տեսակի փոփոխման կարգը սահմանվում է 2002թ. մայիսի 29-ի «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով:

Նշված օրենսդրության հիմնական խնդիրը բանկային համակարգի զարգացումը, հուսալիությունը և բնականոն գործունեությունն ապահովելն ու բանկերի գործունեության համար ազատ տնտեսական մրցակցության հավասար պայմաններ ստեղծելն է:

Բանկի և բանկային գործունեության հասկացությունը

Բանկն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիայի հիման վրա իրականացնել բանկային գործունեություն:

Բանկային գործունեությունն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդն ընդունողի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր տրամադրելու և (կամ) ներդրումներ կատարելու միջոցով: ՀՀ տարածքում բանկային գործունեություն իրականացնելը առանց ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի արգելվում է:

Բանկերի տեսակները.

Ըստ տարբեր հիմքերի բանկերը լինում են հետևյալ տեսակների.

ըստ կարգավիճակի.

1. ՀՀ կենտրոնական բանկը
2. առևտրային բանկերը (ՀՀ Կենտրոնական բանկից բացի մնացած բանկերը):

ըստ հիմնադրման կարգի.

1. բաժնետիրական ընկերություն
2. սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
3. կոոպերատիվ բանկ

ըստ հիմնադրման վայրի.

1. տեղական
2. օտարերկրյա

ըստ բանկային գործառնությունների ընդգրկման.

1. ունիվերսալ
2. մասնագիտացված (իրականացնում են մեկ տեսակի բանկային գործառնություն. օրինակ, խնայողական)

ըստ կառուցվածքի.

1. մասնաճյուղեր ունեցող
2. մասնաճյուղեր չունեցող (բացի մասնաճյուղերից, առևտրային բանկերը կարող են ունենալ նաև ներկայացուցչություններ):

Բանկային գործունեության լիցենզավորումը

ՀՀ տարածքում առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը գործում են միայն բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա:

Բանկային լիցենզիան՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրվող բանկային գործունեություն իրականացնելու թույլտվությունը հավաստող փաստաթուղթ է:

Բանկային լիցենզիան անժամկետ է և դրանում նախատեսված իրավունքները չեն կարող փոխանցվել կամ այլ կերպ օտարվել:

Բանկային լիցենզավորման փուլերը.

ՀՀ կենտրոնական բանկում առևտրային բանկի գրանցվելուն հետևում է դրա լիցենզավորումը: Լիցենզավորումն ունի հետևյալ **փուլերը.**

1. լիցենզիա ստանալու նախնական հավանությունը (*կամ մերժումը*)
2. բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցումը
3. լիցենզիա տալը:

Օրենքով սահմանվում են գրանցման և լիցենզիա ստանալու անհրաժեշտ պայմանները:

ՀՀ կենտրոնական բանկի տեղը ՀՀ բանկային համակարգում

ՀՀ կենտրոնական բանկը կարևորագույն տեղ ունի ՀՀ բանկային համակարգի կարգավորման և կանոնակարգման գործում: Բանկային համակարգում նրա հիմնական խնդիրն է՝ ՀՀ բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը:

ՀՀ կենտրոնական բանկը նպաստում է բանկերի գործունեությանը, կայուն զարգացմանն ու դրանց համար ազատ մրցակցության հավասար պայմանների ստեղծմանը: Այդ նպատակով ՀՀ կենտրոնական բանկը օրենքով օժտված է համապատասխան լիազորություններով և գործառույթներով:

ՀՀ կենտրոնական բանկն ունի բանկերի գործունեության կարգավորման ոլորտում **հետևյալ գործառույթները.**

1. գրանցում է բանկերը և լիցենզավորում է բանկային գործունեությունը
2. սահմանում է բանկերի կանոնադրական կապիտալի նվազագույն չափը և դրանում նշանակալից մասնակցության սահմանափակումները
3. սահմանում է ղեկավարների որակավորման, մասնագիտական համապատասխանության չափանիշները և կարգը
4. ֆինանսների նախարարության հետ համատեղ սահմանում է հաշվապահական հաշվառման կարգը
5. համաձայնություն է տալիս որոշակի գործարքներ իրականացնելու համար
6. սահմանում է հանցավոր ծանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության կանխարգելման կարգը
7. սահմանափակումներ է մտցնում գործունեության որոշակի տեսակներում
8. սահմանում է գործունեության հիմնական և այլ տնտեսական նորմատիվները
9. իրականացնում է գործունեության բացառիկ վերահսկողություն
10. կիրառում է օրենսդրական խախտումների համար պատժամիջոցներ
11. կարգավորում է սնանկացման և լուծարման գործընթացները:

Ինքնաստուգման հարցեր

1. ՀՀ բանկային համակարգը և դրա իրավական կարգավորումը:
2. Բանկերի տեսակները:
3. Բանկային գործունեության լիցենզիան և դրա փուլերը:
4. ՀՀ կենտրոնական բանկի դերը բանկային գործունեության կարգավորման գործում:

ԳԼՈՒԽ 17. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Թեմայի նպատակը՝ ներկայացնել վարկային կազմակերպությունների գործունեության իրավական կարգավորման հիմունքները: Կներկայացվեն վարկային կազմակերպությունների էությունը և գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև կտրվեն վարկային կազմակերպությունների տեսակները: Կքննարկվեն վարկային կազմակերպությունների գրանցման և լիցենզավորման առանձնահատկությունները և ՀՀ Կենտրոնական բանկի դերը վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման գործում:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողները կկարողանան.

- ներկայացնել վարկային կազմակերպությունների գործունեության իրավական կարգավորման հիմունքները
- պատկերացնել վարկային կազմակերպությունների էությունը և գործունեության առանձնահատկությունները
- դասակարգել վարկային կազմակերպություններն ըստ տեսակների
- ներկայացնել վարկային կազմակերպությունների գրանցման և լիցենզավորման առանձնահատկությունները և ՀՀ Կենտրոնական բանկի դերը վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման գործում:

Վարկային կազմակերպությունների իրավական կարգավորումը

Վարկային կազմակերպությունների գործունեությունը Հայաստանում կարգավորվում է 2002թ. մայիսի 29-ի «Վարկային կազմակերպությունների մասին»,

2001թ. նոյեմբերի 6-ի «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին», 1996թ. հունիսի 30-ի «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով ու դրանց շրջանակներում ընդունված այլ իրավական ակտերով:

«Վարկային կազմակերպությունների մասին» օրենքով կարգավորվում է վարկային կազմակերպությունների, այդ թվում՝ վարկային միությունների, խնայողական միությունների, լիզինգային, ֆակտորինգային կազմակերպությունների և այլ վարկային կազմակերպությունների լիցենզավորման, գործունեության կարգավորման, գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման կարգն ու պայմանները:

Վարկային կազմակերպության հասկացությունը

Սահմանում. վարկային կազմակերպությունը «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքով սահմանված կարգով լիցենզիա ստացած իրավաբանական անձն է, որն իրավունք ունի իրականացնել այդ օրենքով սահմանված գործունեության տեսակները:

Ըստ էության, վարկային կազմակերպությունները յուրահատուկ «բանկեր» են որոշ առանձնահատկություններով, որոնց համար սակայն օրենքը սահմանել է գործունեության առավել մեղմ իրավական ռեժիմ:

Վարկային կազմակերպության գործունեություն է համարվում որպես ձեռնարկատիրական գործունեություն փոխառություններ ներգրավելը և (կամ) նմանատիպ գործարքներ կնքելը և (կամ) վարկեր տրամադրելը կամ օրենքով սահմանված այլ ներդրումներ կատարելը:

Նմանատիպ գործարքներ են համարվում ներդրումային և վճարային արժեթղթերի հրապարակային թողարկումը, որոշակի դրամական պարտավորությունների ստանձնումը և այլն:

Վարկային կազմակերպությունների տեսակները

ըստ հիմնադրման կարգի.

1. սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
2. բաժնետիրական ընկերություն
3. առևտրային կոոպերատիվ
4. ոչ առևտրային կոոպերատիվ

ըստ կառուցվածքի.

1. մասնաճյուղեր ունեցող
2. մասնաճյուղեր չունեցող

ըստ տիպերի (խմբերի).

1. վարկային միություններ
2. խնայողական միություններ
3. ֆինանսական վարձակալության (լիզինգային) կազմակերպություններ
4. ֆակտորինգային (դրամական պահանջի զիջման դիմաց) կազմակերպություններ
5. այլ վարկային կազմակերպություններ:

Վարկային կազմակերպությունների գրանցումը և լիցենզավորումը

Իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկը: Սակայն, ի տարբերություն բանկերի, վարկային կազմակերպությունների գրանցումն ու լիցենզավորումը իրականացվում է առավել պարզեցված և արագացված ընթացակարգով և օրենքի ավելի ցածր պահանջներով:

ՀՀ կենտրոնական բանկի տեղը վարկային կազմակերպությունների համակարգում

ՀՀ կենտրոնական բանկը կարևորագույն տեղ ունի վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման և կանոնակարգման գործում:

Կենտրոնական բանկը նպաստում է վարկային կազմակերպությունների գործունեությանը, կայուն զարգացմանն ու դրանց համար ազատ մրցակցության հավասար պայմանների ստեղծմանը: Այդ նպատակով ՀՀ կենտրոնական բանկը օրենքով օժտված է համապատասխան լիազորություններով և գործառնություններով:

ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունները վարկային կազմակերպությունների կարգավորման հարցում ՀՀ կենտրոնական բանկը.

1. իրականացնում է գրանցումը և լիցենզավորումը
2. որոշում է կանոնադրական կապիտալի նվազագույն չափը և դրանում սեփականության սահմանափակումները
3. սահմանում է ղեկավարների մասնագիտական և որակավորման համապատասխանության չափանիշները
4. սահմանում է հիմնական տնտեսական նորմատիվները (որոնք պետք է սահմանվեն բանկերի համեմատ ավելի մեղմ ռեժիմով)
5. գործունեության նկատմամբ ունի վերահսկողության բացառիկ իրավունք
6. սահմանում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության կանխարգելման կարգը
7. ֆինանսների նախարարության հետ համատեղ սահմանում է հաշվապահական հաշվառման կարգը
8. սահմանում է գործունեության մասին պարբերաբար հրապարակման կարգը
9. կիրառում է պատասխանատվության միջոցներ օրենսդրության խախտումների համար
10. կարգավորում է սնանկացման և լուծարման գործընթացները և այլն:

Ինքնաստուգման հարցեր

1. Վարկային կազմակերպության հասկացությունը և գործունեությունը:
2. Վարկային կազմակերպության պետական գրանցումը և լիցենզավորումը:
3. Վարկային կազմակերպությունների ֆինանսական գործառնությունները:
4. ՀՀ կենտրոնական բանկի դերը վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման գործում:

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ սահմանադրություն, 5 հուլիսի, 1995թ.
2. ՀՀ օրենքներ
3. ՀՀ կառավարության որոշումներ և այլ նորմատիվ իրավական ակտեր
4. Ս. Սուրադյան, «Ֆինանսական իրավունք», ուսումնական ձեռնարկ, Երևանի պետական համալսարան, 2001թ.
5. *Н. Эриашвили, "Финансовое право", учебник, второе издание, "Юнити", Москва, 2002г.*
6. *Финансы. Учебник/ Под ред. проф. В.В. Ковалева. – М.: ПБОЮЛ М.А. Захаров, 2001. – 640 с.*
7. *Финансовое право. Общая часть: Учебник. – М.: Юристъ, 2000. -256 с.*

ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Ա

ԱԱՀ, 38
 Ակցիզային հարկ, 38
 Անուղակի հարկեր, 34
 Ապահովագրական բրոքերներ, 56
 Ապահովագրական գործակալներ, 56
 Ապահովագրական գումար, 55
 Ապահովագրական դեպք, 55
 Ապահովագրական հատուցում, 55
 Ապահովագրական պարզև, 55
 Ապահովագրվող, 55
 Ապահովագրող, 55
 Ապահովագրություն, 54
 Արժեթուղթ թողարկել (Էմիսիա), 59
 Արժեթղթերի շուկա, 58
 Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձինք, 59
 Արժութային կարգավորում, 71
 Արժութային հաշվարկներ և գործառնություններ, 71
 Արժութային վերահսկողություն, 72

Բ

Բանկ, 75
 Բանկային գործունեություն, 75
 Բանկային գործունեության լիցենզիա, 76
 Բնապահպանակար վճար, 47
 Բնօգտագործման վճար, 47
 Բյուջեի հավելուրդ, 23
 Բյուջեի պակասորդ, 23
 Բյուջետային դրամակարգում, 31
 Բյուջետային երաշխիք, 24
 Բյուջետային վարկ, 23

Գ

Գլխավոր ֆինանսիստ, 51
 Գույքահարկ, 38

Դ

Դեպք, 55
 Դիտարկում, 15
 Դրամաշրջանառություն, 66
 Դրամավարկային քաղաքականություն, 67

Ե

Եկամտահարկ, 37

Լ

Լրավճար, 23

Հ

Հանրային, 6
 Հաստատագրված վճարներ, 38
 Հարկ, 33
 Հարկային ժամանակաշրջան, 34
 Հարկային կանխավճար, 35
 Հարկային սուբյեկտ, 33
 Հարկի դրույքաչափ, 34
 Հարկի վճարման կարգ, 34
 Հարկման առարկա, 33
 Հարկման բազա, 34
 Հարկման միավոր, 34
 Հարկման օբյեկտ, 33
 ՀՀ արժեթղթերի հանձնաժողով, 60
 ՀՀ բանկային համակարգ, 74
 ՀՀ բյուջետային գործընթաց, 25

ՀՀ բյուջետային համակարգ, 20
 ՀՀ գանձապետական համակարգ, 50
 ՀՀ կենտրոնական բանկ, 76
 ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե, 30
 Հողի հարկ, 38

Ճ

Ճանապարհային վճար, 48

Մ

Մասնավոր, 6
 Մաքսատուրք, 43

Ն

Նախահաշվաբյուջետային ֆինանսավորում, 52
 Նախահաշիվ, 52

Շ

Շահառու, 55
 Շահութահարկ, 37

Պ

Պարզեցված հարկ, 39
 Պարտադիր սոցիալական ապահովագրության պետական վճարներ, 46,
 Պետական բյուջեի եկամուտներ, 21
 Պետական վարկ, 23
 Պետական տուրք, 42
 Պետբյուջեի ծախսեր, 24

Ս

Սուբվենցիա, 23

Կ

Կենտրոնական դեպոզիտարիա, 59

Օ

Վարկային կազմակերպություն, 79

Վերլուծություն, 16

Վերստուգում, 16

Կ

Տեղական ներդրողներ, 62

Տեղական վճար, 46

Տեղական տուրք, 45

[Տուգանք, 12](#)

Տուժամիջոցներ, 12

[Տույժ 12](#)

ՈԻ

Ուղղակի հարկեր, 34

Ուսումնասիրություն, 16

Ստուգում, 15

Փ

Փոխարինող հարկեր, 38

Ֆ

Ֆինանսական գործունեություն, 7

[Ֆինանսական համակարգ, 6](#)

Ֆինանսական նորմեր, 10

Ֆինանսական վերահսկողություն, 14

Ֆինանսներ, 6

[Ֆոնդային բորսա 59](#)

Օ

Օտարերկրյա ներդրող, 63

Օտարերկրյա ներդրումներ, 62

Տ Ի Գ ր ա ն Ա լ ո յ ա ն

Ֆ Ն Ա Ն Ս Ա Կ Ա Ն Ի Ր Ա Վ Ո Ւ Ն Ք

Խմբագիր՝

Լարիսա Նադարյան

Համակարգչային ձևավորող՝

Աննա Գևորգյան

[ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ](#)